

Երազոնյա այսպես

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱՐԱԹԱԹԵՐԹ

Գոնսալես Գուարչի այցը Մայր Աթոռ



Հունիսի 21-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց իսպանացի նշանավոր գրող Գոնսալես Գուարչին՝ ուղեկցությամբ Հայաստանի գրողների միության նախագահ Լեւոն Անանյանի: Ողջունելով իսպանացի մտավորականի այցը Մայր Աթոռ՝ Նորին Սրբությունն իր բարեմաղթանքն ու օրհնությունը բերեց նրան եւ իսպանացիները ընտանիքի անդամներին:

Տիար Գոնսալես Գուարչին իր հերթին շնորհակալություն հայտնեց Նորին Սրբությանը՝ ջերմ ընդունելության համար, եւ Վեհափառ Հայրապետին փոխանցեց Հայոց ցեղասպանությանը նվիրված իր «Հայկական

կտակ», «Սպիտակ լեռ» եւ «Հայոց ծառը» ստեղծագործությունների ռուսերեն թարգմանությունները: Վեհափառ Հայրապետը գնահատանքով անդրադարձավ Գոնսալես Գուարչի ստեղծագործություններին՝ նշելով, որ գրողի ազնիվ զգացումներն արտահայտող ստեղծագործությունները մարդասիրական այն փառանքի շարունակությունն են, որոնք իրենց ձայնն են բարձրացրել Հայոց ցեղասպանության ճանաչման եւ դատապարտման համար: Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհունակություն հայտնեց Գոնսալես Գուարչին՝ հայ ժողովրդին եւ առհասարակ համայն մարդկությանը բերած ծառայությունների համար՝ մասնավորապես շեշտելով, որ իսպանացի գրողի պես անձանց ջանքերի շնորհիվ Հայոց ցեղասպանությունը պիտի ճանաչվի ու դատապարտվի բոլոր ժողովուրդների ու պետությունների կողմից:

Հայ երիտասարդներն այցելեցին Թբիլիսիի եբրայական սինագոգա եւ մուսուլմանական մզկիթ

Հունիսի 14-ին Վիրահայոց թեմի «Հայարտուն» մշակույթի կենտրոնը կազմակերպեց Վրաստանի հայ համայնքի երիտասարդ ներկայացուցիչների այցը Թբիլիսիում գտնվող սինագոգա եւ մզկիթ: Այցի նպատակն էր Վրաստանի հայ երիտասարդությանը ծանոթացնել հուդայական եւ իսլամական կրոնների պատմությանը եւ ավանդույթներին: Երիտասարդներին ուղեկցում էին «Հայարտուն» կենտրոնի հոգեւոր տեսուչ Գեորգ Երկանյանը, Վիրահայոց թեմի առաջնորդի խորհրդական Լեւոն Իսախանյանը եւ կենտրոնի տեխնիկական բաժնի պատասխանատու Վալերի Բադալյանը:



Սինագոգում երիտասարդներին դիմավորեց ռաբբի Ավիգլիա Ռոզենբլատը: Նա ներկայացրեց սինագոգի ճարտարապետությունը եւ ներքին կահավորությունը: Այնուհետեւ կայացավ զրույց իրեն ժողովրդի կրոնի, ավանդույթների եւ սովորությունների մասին:

Հետո երիտասարդները եղան հայկական Նորաշեն տաճարում, որը գտնվում է սինագոգից ոչ հեռու: Հարկ է նշել, որ արդեն սկսվել են վթարային վիճակում գտնվող այս տաճարի վերականգնման նախապատրաստական աշխատանքները: Օրվա երկրորդ կեսին երիտասարդներն այցելեցին մզկիթ, որտեղ նրանց դիմավորեց Համայն Վրաստանի շեյխ Վազիֆ Ալպերովը: Շեյխ Վազիֆը հայ երիտասարդներին ծանոթացրեց մուսուլման-շիիթների պատմությանը եւ ավանդույթներին, խոսեց Թբիլիսիի իսլամական համայնքի պատմության, ինչպես նաեւ մզկիթի ճարտարապետության ու ներքին կահավորության մասին:

Վիրահայոց թեմի մամուլ դիվան

Շքանշանների հանձնում Մայր Աթոռ Սբ Էջմիածնում



Հունիսի 20-ին Մայր Աթոռ Սբ Էջմիածնում՝ «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանի շենքում, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ տեղի ունեցավ Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցու շքանշանների հանձնման արարողություն: Իրենց ազգագույն եւ եկեղեցական գործունեության համար Հայ Եկեղեցու «Սուրբ Ներսես Շնորհալի» պատվոք բարձր շքանշանի արժանացան տիար Լազար Սուլջանը եւ տիկին Լաուրա Հարությունյանը: Նվիրյալների կյանքին ու գործունեությանն անդրադարձան Սիմեոն Հախումյանը եւ Լազար Սուլջանը: Հայրապետական սրբատառ կոնդակներն ընթերցեցին Գեղարքունիքի թեմի առաջնորդ Մարկոս եպս Զովհաննիսյանը եւ Մայր Աթոռի հոգեւոր կրթական հաստատությունների վերատեսուչ, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Գեորգ եպս Սարոյանը: Լազար Սուլջանին ուղղված հայրապետական կոնդակում մասնավորապես նշված է. «Խորհրդային տարիներից սկսյալ՝ շուրջ քառորդ դար Դուք ծառայեցիք Հայ Եկեղեցու գործերի խորհրդում եւ ՀՀ կրոնի գործերի պետական խորհրդում՝ տեսուչից հասնելով մինչեւ նախագահի պաշտոնին: Այսօր ուրախությամբ ենք անդրադառնում, որ Դուք միշտ եղաք ու մնացիք մեր Եկեղեցու շահերի նվիրյալ պաշտպանն ու ազնիվ ջատագով՝ ջանալով առավելագույնս ի սպաս բերել, որպեսզի Հայոց Եկեղեցին հնարավորություն ունենա լիարժեքորեն իրականացնել իր օրհնաբեր առաքելությունը մեր ժողովրդի կյանքում: Հավատավոր հայորդու աջակցության շնորհիվ իրականացվեցին բազմաթիվ աստվածահաճո նախաձեռնություններ, որոնք պայծառությամբ բերեցին մեր Եկեղեցուն եւ Մայր Աթոռ Սբ Էջմիածնին: Ձեր

գործունեության կարեւոր արգասիքներից եղավ Հաղպատի, Սանահինի, Նորավանքի եւ պատմական այլ վանքերի ու եկեղեցիների վերադարձը Եկեղեցուն, որով մեր դարավոր սրբավայրերը վերստին իրենց դռները բացեցին հավատացելուց առջեւ՝ ծառայելով հայորդյաց հոգեւոր կարիքներին: Արժանի իշխատակ են նաեւ Ձեր ջանքերը Սբ Էջմիածնի գանձերի ցուցադրությունը արտերկրում կազմակերպելու գործում, որն ունեցավ շարունակական ընթացք՝ մեր հոգեւոր-մշակութային հարստությունը ճանաչելի դարձնելով օտար ժողովուրդներին: Լաուրա Հարությունյանին ուղղված հայրապետական կոնդակում ասված է. «Ուրախ ենք այսօր հաստատելու, որ հասկանալի խորհրդային տարիների հակաեկեղեցական տրամադրությունների՝ Դուք կարեւոր աջակցություն բերեցիք մեր Եկեղեցուն՝ քրիստոնեական մեր հավատքը պահպանելու եւ մեր հոգեւոր հարուստ ավանդներն ու ժառանգությունը սերունդներին փոխանցելու սրբազան առաքելության մեջ: Հայաստանի անկախությունից հետո եւս շարունակեցիք արդյունավորապես ծառայել մեր Հայրենիքին՝ Ձեր կարողություններն ի սպաս բերելով մեր Սբ Եկեղեցու գործունեությանը: Մենք գոհություն ենք մատուցում Բարձրալիկ, որ մեր ժողովրդին օրհնել է Ձեզ պես հավատավոր ու եկեղեցասեր զավակներով, ովքեր իրենց կյանքն իմաստավորում են աստվածահաճո գործերով: Կոնդակների ընթերցումից հետո Վեհափառ Հայրապետը Լազար Սուլջանին եւ Լաուրա Հարությունյանին հանձնեց «Սուրբ Ներսես Շնորհալի» պատվոք շքանշան: Մեծարյալներն իրենց հերթին շնորհակալության խոսք ուղղեցին Նորին Սրբությանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական այցով մեկնեց Ֆրանսիա եւ Շվեյցարիա

Հունիսի 23-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական այցով մեկնեց Ֆրանսիա եւ Շվեյցարիա: Այցի ընթացքում Նորին Սրբությունը հանդիպումներ ունեցավ թեմական-վարչական կառույցների ներկայացուցիչների եւ Մայր Աթոռ Սբ Էջմիածնի բարերարների հետ: Վեհափառ Հայրապետին ուղեկցում էր գավազանակիր Անանիա արքեպ Մատուռյանը:



ՎԱՐՊԱՎԱՌԻ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

լաւաշ հաց, գաթա ու խորտիկ: Իրենց բոլոր փոխորդ լաթերն ու զարդերը դուրս կը հանեն, ով որ չունի, ունեցողէ մը փոխ կ'առնէ: Եթէ մեկը իրեն տանը անդամներուն եւ կամ իւր մէկ դրացիին հետ գտնուած է, անպատճառ պետք է հաշտուի, եթէ ոչ իւր ուխտը ընդունելի չ'ըլլար: Կիրակի առտուն շատ կանուխ, դեռ բարի լույսը չփրթած, ճամփա կ'ելլեն ուխտաւորները, մեծ մասամբ հետիոտն, շատ մը կիներ ու աղջիկներ բոպիկ կը քալեն, մանաւանդ անոնք, որ խոստացած են անպատճառ Վարդավառին Սուրբ Լույսի ոտքը երթալ. անոնք քարերու, մացառներու եւ փուշերու մէջէն կը քալեն, շատերու ոտքերէն արիւն կը վազէ, սակայն բնաւ հոգերին չէ, որովհետեւ կատարելապէս համոզուած են, թէ իրենց ուխտը ընդունելի պիտի ըլլայ:

Դեռ արեգակը լեռներուն գլուխը չցաթած, ուխտաւորներուն մէկ ծայրը կը հասնի Սուրբ Լույսին ստորոտը, հոն պաղ ջուրին առջէն կ'իջնեն Նախաճաշ մը ընելու եւ հանգստանալու: Ով որ ամենէն առաջ ու կանուխ հասած է աղբիւրը, անիկա իրաւունք ունի բոլոր ուխտաւորներուն վրայ ջուր սրսկելու:

Տեղ հասած ուխտավորները, ինչպէս նաեւ դաշտերից ծաղիկ հավաքող աղջիկներն ու տղաները, գիշերն անցկացնում էին երգային մրցութներով կամ էլ կիրակի լուսադմին խարույկ էին վառում՝ խմբապարի բռնկելով նրա շուրջը՝ այդպիսով ազդարարելով Վարդավառի սկսվող տոնը.

*Վարդ ի բացվե առավոտվան
խաղերով,
Իմ յար բաղչեն վարդ կը քաղէ
մաղերով,
Վարդ ի բացվե Վարթորովան
կիրակին,
Քու սերն ինկե մեջ իմ սրտի գուրակին:*

1894 թ. մի նկարագրության մեջ, որը բնորոշ է նաեւ Հայաստանի մի շարք ազգագրական այլ շրջանների, Հյուսիսային Արցախի Գետաշեն գյուղի Վարդավառի շաբաթ՝ լույս կիրակիի հանդեսը ներկայացվում է հետեւյալ ձևով: Ասվում է, որ շաբաթ օրը տղաներն ու աղջիկները, ծաղիկ հավաքելով, մի մեծ փուսջ են կապում եւ երեկոյան այդ փուսջը պահ են տալիս տարեցներից մեկին, իսկ իրենք՝ շրջան կազմած նստում: Տղաները եւս շրջան էին կազմում, եւ երկու խմբերի միջեւ սկսվում էր երգային մրցութային այնքան ժամանակ, մինչ կողմերից մեկն ի վիճակի չէր լինում պատասխանել դիմացի խմբին կամ էլ պատասխան չէր գտնում: Այդ ժամանակ հաղթող խումբը հանդիսավորապէս ստանում էր ծաղկեփուսջը: Պերճ Պռնշյանն իր վեպում («Սոս եւ Վարդիթեր») համանուն ձեռնարկում է Վարդավառի շաբաթ գիշերվա տոնախմբումը:

Փնջած ծաղիկներով զարդարում էին նաեւ եկեղեցին: Բասենում «Վարդավառի կիրակի օրվա պատարագի ժամանակ եկեղեցու բեմը եւ սուրբ Սեղանը զարդարում էին հազար տեսակ ծաղիկներով ու բազմաթիվ վարդերով (Ե. Լալայան. «Ազգագրական հանդես», հտ. Ա. Շուշի, 1895, էջ 227): Ծաղիկներով զարդարում էին հատկապէս կթան կովերի ճակատները»:

Վարդավառը ժամանակային առումով համընկնում է բերքի հասունացման եւ սկսվելից բերքահավաքի հետ, եւ այս տոնը նաեւ մի ընծայաբերում է սպասվող բերքի առատ լինելուն եւ անկորուստ հավաքմանը: Վարդավառի տոնին հասկեր էին տանում եկեղեցի՝ խնդրելով, որ դաշտերը կարկուտից ու մորեխից անվնաս մնան:

Ս. Պատարագից հետո, կատարելով հասկերի օրհնությունը, Վարդավառի եկեղեցական կանոնական աղոթքից հետո քահանան ասում էր հետեւյալ աղոթքը. «Դաշտերու հունձքերէն որոմներ կը բերեն ու կը շարեն սեղանին վրայ՝ խնդրելով, որ իրենց դաշտերը անվնաս մնան մարախեն ու կարկուտէն, տաք ու շոգէն» (Վարդավառի աւանդութիւնները, «Ծաղիկ» հանդես, Կ. Պոլիս, 1895, էջ 412):

Գողթն գավառում կանայք, թելերի վրա ամրացնելով ծաղիկներ, խնձոր, մանր վարունգ եւ մանավանդ վարդեր, առավոտյան խաչածէ կապում էին երեխաների կրծքին եւ այդպէս տանում եկեղեցի: Պատարագից հետո ատյանից առաջ երկու գրակալ էին դնում, որոնցից մեկի վրա Ավետարանն ու Նշխարը էին դնում, իսկ մյուսի վրա՝ մի ամանով ջուր: Երբ ժամավորները մոտենում էին Ավետարանը համբուրելու եւ Նշխարը վերցնելու, մի տիրացու, ձեռքի ծաղկեփուսջը թաթախելով ջրի մեջ, սրկում էր սրանց վրա (Հ. Խառատյան-Առաքելյան, Հայ ժող. տոները, էջ 204):

Սպասվող բերքի օրհնության ժողովրդային ծիսական յուրօրինակ մի արարողություն էր խաչբուռի պատրաստումը: Այն հենց դաշտում հնձվորները ցորենի հասկերից հյուսում էին՝ ընծայելով եկեղեցու խորանի ս. Սեղանին: Օրհնությունից հետո խաչբուռը նվիրում էին արտատիրոջը:

Ինչպէս գրում է Հ. Խառատյանը, «Թե՛ խաչ-փնջերը», թե՛ «կսկրանքը», թե՛ «խաչբուռը»՝ որպէս օրվա գլխավոր զարդ ու խորհրդանշիչ, դնում էին ցորենի կամ ալյուրի ամբարի վրա եւ պահում մինչեւ հաջորդ Վարդավառը:

Շարունակությունը՝ էջ 3

Հայ ժողովրդի դասկերումը օսարագգի ճանադարհորդների եւ միսիոներների գրվածքներում

Հայ ժողովուրդը, լինելով հնագույն քաղաքակրթության ներկայացուցիչներից մեկը, դարեր շարունակ գրավել է օտարագրիների ուշադրությունը: Դրա մասին են վկայում բազմաթիվ այլազգի ճանապարհորդների, միսիոներների, դիվանագետների վկայություններն ու գրառումները, ինչպէս նաեւ գիտության եւ մշակույթի գործիչների երկերը: Կասկածից վեր է, որ ոչ մի ազգի մասին չի կարող լինել միանշանակ կարծիք: Տարբեր մարդիկ, պատկանելով տարբեր մշակույթների ու դավանանքների եւ օժտված լինելով անհատական աշխարհընկալումով, կարող են արտահայտել տրամագծորեն տարբեր կարծիքներ միեւնոյն եթնիկական հանրության, նրա մշակութային առանձնահատկությունների մասին: Սակայն որքան էլ բազմազան լինեն տեսակետները, միեւնոյն է, դրանք ունեն որոշակի ընդհանրություններ: Այդպէս է նաեւ հայ ժողովրդի պարագայում: Հարկ է նշել, որ պատմական տարբեր դարաշրջաններում ապրած հայերը տարբեր կերպ են բնութագրվել օտարագրիների կողմից: Այս իրողությունը չպետք է զարմանք առաջացնի, քանի որ ցանկացած էթնոս դարերի ընթացքում հոգեբանական փոփոխությունների է ենթարկվում. կախված պատմական պայմաններից՝ որոշակիորեն փոխվում են ազգի հոգեկերտվածքը, նրա աշխարհընկալումն ու արժեքամակարգը, բարոյական սկզբունքները, իղձերն ու ձգտումները:

Այս փոփոխություններն իրենց բնույթով կարող են լինել դրական, բայց կարող են լինել նաեւ բացասական: Թերեւս սխալված չենք լինի եթե ասենք, որ թե՛ լավ եւ թե՛ վատ փոփոխություններն զգալիորեն պայմանավորված են այն պատմաաշխարհագրական միջավայրով, որում դարեր շարունակ ապրել է տվյալ ազգը: Եթե որեւէ էթնոս տեւական ժամանակ կողք կողքի ապրում է հետադեմ ու բարբարոս ժողովուրդների միջավայրում, ապա նա կ'ամ հետզհետեւ նմանվում է նրանց, կ'ամ էլ հոգեբանորեն կոտորվում է եւ դառնում ստրկամիտ: Բայց եւ այնպէս ագրեսիվ միջավայրում երկար ժամանակ գտնվելը կարող է հանգեցնել նաեւ դրական փոփոխությունների, մասնավորապէս՝ ազգը նման պայմաններում կարող է դառնալ ավելի ուժեղ եւ տոկուն՝ ունակ ճիշտ կերտելու սեփական ներկան ու ապագան: Հետաքրքիր է, թէ ինչպէս են ազդել պատմական պայմանները հայ ժողովրդի հոգեբանության ու մտածելակերպի, արժեքամակարգի ու բարոյական նկարագրի վրա: Ահա սա էլ կհանդիսանա առկա հոդվածի վերլուծության առարկան: Վերլուծության համար մենք հիմք կընդունենք օտարագրիների՝ հայ ժողովրդին տված գնահատականները, քանզի վերջիններս ենթադրաբար ավելի օբյեկտիվ են ու անաչառ, քան հայերի տեսակետները հարազատ ազգի մասին: Նախ եւ առաջ ասենք՝ մեր ժողովրդի մասին եղել են բազմաթիվ կարծրա-



տիպեր, եւ մենք կփորձենք պարզել, թե որքանով են այդ կարծրատիպերը համապատասխանում իրականությանը: Թերեւս ավելորդ չի լինի նշել, որ զուտ կարծրատիպերով դատելը բնավ միշտ չէ, որ օբյեկտիվ ու համակողմանի պատկերացում է տալիս որեւէ ժողովրդի մասին: Բանն այն է, որ կյանքը դիմամիկ ու հետզհետեւ փոփոխվող երեւոյթ է: Կյանքի հետ մեկտեղ փոխվում են նաեւ ազգերը, նրանց ազգային դիմագիծը: Որեւէ ազգին մի քանի դար առաջ տրված գնահատականը կարող է միանգամայն սխալ լինել մի քանի դար հետո: Ուստի եւ կարծրատիպ-պատկերացումներին անհրաժեշտ է վերապահումով մոտենալ:

Հայերի մասին գրված գրքերը կարելի է բաժանել չորս խմբի. 1) գրքեր, որոնք գրվել են մինչեւ 19-

րդ դարը, 2) գրքեր՝ գրված 19-րդ դարում եւ 20-րդ դարի սկզբներում, 3) միսիոներների կողմից գրված գրքեր 20-րդ դարի միջին շրջանում, 4) վերջին շրջանում այլազգի ճանապարհորդների գրած գրքեր: Առաջին խմբին պատկանող գրքերում հայերը, որպէս կանոն, հիացական գնահատականի են արժանանում: Նրանք բնութագրվում են իբրեւ քաջարի ռազմիկներ, հոգեւորականներ, ինչպէս նաեւ՝ ճարպիկ վաճառականներ: Երկրորդ խմբի գրքերում հայը հիմնականում ներկայացված է իբրեւ ազահ եւ ստրկամիտ անձնավորություն, նույնքան վատը, որքան իրեաները (տե՛ս Hamalian L., As Others See Us. The Armenian Image in Literature, Ararat Press, 1980, էջ 117): Գրքերի երրորդ խմբում, որոնք հիմնականում գրվել են օտարերկրացի միսիոներների

կողմից, հայերը ներկայացված են իբրեւ աշխատասեր ու աստվածապաշտ քրիստոնյա ազգ: Եվ վերջապէս՝ գրքերի չորրորդ խմբում հայերը բնութագրվում են որպէս խելացի ու քաղաքակիրթ ազգ, որը հավատարիմ է իր մշակութային: Օտարների բնորոշմամբ հայերը մարդկային օազիս էին ստեղծել հեթանոս եւ իսլամադավան ժողովուրդների «անապատում» (տե՛ս Hamalian L., նշվ. աշխ., էջ 117): Վերն ասվածից բնավ դժվար չէ նկատել, որ մեր ազգը հիմնականում դրական է գնահատվում օտարների կողմից: Իսկ ինչ վերաբերում է հայերին նվիրված գրքերի երկրորդ խմբում արտահայտված ոչ այնքան բարեհաճ գնահատականին, ապա ասենք, որ աշխարհում, թերեւս, գոյություն չունի այնպիսի ազգ, որը չունենա որոշ թերություններ ու արատներ: Վերջին հաշվով յուրաքանչյուր ազգի էութան մեջ կան թե՛ լավը եւ թե՛ վատը: Հայերն այս առումով չեն կարող բացառություն լինել:

Հայերի մասին հակասական տեսակետներ է արտահայտել հանրահռչակ իտալացի վաճառական եւ ճանապարհորդ Մարկո Պոլոն իր «Մարկո Պոլոյի գիրքը» վերնագրված գրքում (Polo M., The Book of Marco Polo. Heritage House, New York, 1952): Ի դեպ, այս գիրքն առաջիններից է, որտեղ խոսվում է հայոց աշխարհի մասին:

«Հայերը մի ժամանակ իրաշալի մարզամրցորդներ էին ու քաջարի մարտիկներ, բայց այժմ նրանք տրվել են խմիչքին ու դարձել են երկչոտ: Հայերը Գիգիա կոչվող մի քաղաք ունեն Կասպից ծովի ափին:

Շարունակությունը՝ էջ 5

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ ՍԻՄԵՈՆ Ա ԵՐԵՎԱՆԴԻ (1763-1780)

Սկիզբը՝ թիվ 7-11

Սիմեոնն իսկույն օգտվեց տրված արտոնությունից և Սինաս եպիսկոպոսին առաջնորդ ու նվիրակ նշանակեց Ռուսաստանում: Նա Բայազետի նվիրակն էլ էր, որը եպիսկոպոս էր ձեռնադրվել 1767 թվի հուլիսի 8-ին: Կաթողիկոսը 1771 թվի հուլիսի 10-ին՝ հրովարտական արձակելուց երեք տարի հետո, եկեղեցական արարողություն կազմակերպեց: Նա կամենում էր Ռուսաստանի հովանավորությունը տարածել բոլոր հայերի ու ողջ Հայաստանի վրա: Հայոց եկեղեցում աղոթք էր ասվում ռուս կայսրուհու համար, որը մտավ հայ հոգեւոր պաշտամունքի մեջ: Շնորհիվ ռուսական հովանավորության՝ զսպվեցին պարսկական տիրապետության հարստահարությունները, և մարդիկ իրենց մի փոքր ապահովված զգացին բնահաճ բռնություններից: Նման քաղաքականություն վարելու համար հարկ չկա Սիմեոնին ո՛չ մեղադրել և ո՛չ էլ՝ քննադատել:

Սիմեոն կաթողիկոսն աչքի ընկավ կաթողիկոսյան ծավալման դեմ մղած պայքարով: Կարևոր Եվդոկիացի վարդապետը, որը 1760 թվին Շամախեցու կողմից եպիսկոպոս էր ձեռնադրվել, 1764 թվին, որպես նվիրակ, ուղարկվեց Ախալցխա, որտեղ սկսեց աղթարմայություն քարոզել, այլ խոսքով՝ հակվեց դեպի հռոմեադավանությունը:

Կաթողիկոսությունն արդեն մի հիսուն տարի առաջ մուտք էր գործել Ախալցխա, սակայն հայտնի չէ, թե Գեորգը երբևէ կհրապարակեր այդ ուղղությունը:

Գեորգն սկսեց իր հանդուգն գործունեությունը շարունակել և անգամ եկեղեցու բեմից վատաբանեց Հայոց եկեղեցին ու ազգը՝ հիշելով Հռոմի պապի անունը: Կարնեցիք բազմակնիք նամակով բողոքեցին կաթողիկոսին: Նա էլ նամակ գրեց Օսմանյան տերությանը և պատրիարք Բասմաջյանի ձեռքով երեք հրովարտակ պատրաստել տվեց, որոնցից երկուսն անմիջապես Ախալցխայի դեմ, իսկ երրորդը՝ բոլոր վայրերի, որտեղ հայ ֆրանկացյալներ կային, որ նրանք ենթարկվեն տերության օրենքներին, իսկ ֆրանկներին վտարեն իրենց երկրից: Հրովարտակներն ստանալուց հետո Սիմեոնը Տփղիսի առաջնորդ Մարտիրոս Եպիսկոպոսին, մականունը՝ Ասկոթ, 1769-ին հատուկ պաշտոնով ուղարկեց Ախալցխա, իսկ կաթողիկոսի կողմից բանադրված Գեորգ Եվդոկիացին շտապով փախավ Կ. Պոլիս և ապավինեց Բեկոլլի թաղի լատին վանքերից մեկին, որտեղ էլ մեռավ: Ինչ վերաբերում է Մարտիրոս Եպիսկոպոսին, ապա նա հրովարտակի ուժով Պողոս, Ստեփան և Հովհաննես սեւագլուխներին ու Հակոբ չերեցին աքսորեց Էջմիածին, և հռոմեամետների ձեռքն անցած երեք եկեղեցիները ետ վերադարձվեցին: Նա փաշայի միջոցով յոթ պատրիկ ֆրանկների ձեռքակալել տվեց և աքսորեց իրենց երկիրը: Դրանք էին՝ Պողոս Լեւոնյանը, Հովհաննես Ճիկոնյանը և Ստեփան Ավթանդիլյանը, բոլորն էլ վարդապետներ, որոնք ուսանել էին Հռոմի պրոպագանդայի վարժարանում, իսկ Հակոբ Ախալցխացին ամուսնավոր երեք

եր: Աքսորված լատին կրոնավորներից հիշվում են Ալոիզիոսը, Հերոնիմասը, Վիլհելմոսը, Ֆրեդերիկոն և Ֆորտունատոն: Սակայն Ախալցխայի փաշան փոխանակ նրանց անմիջապես աքսորելու, կալանավորեց մի ծովափնյա վայրում՝ որպես խռովարարների: Այդ տեսելով՝ Ֆրանսիայի դեսպանը՝ Գիսար Սենթրիսը կոմսը, շրջաբերական ուղարկեց լատին բոլոր կրոնավորներին, որ նրանք չմտնեն հայերի մեջ, որտեղ էլ որ գտնվելու լինեն: Այդ նամակը պատրիարքի միջոցով հասավ Սիմեոնին, որը դեսպանին շնորհակալություն հայտնեց և լատին կրոնավորներին ազատել տվեց, սակայն դեսպանի այդ խոսքն քայքայեց հռոմեադավանների կողմից ընդունելություն չգտավ:

Էջմիածին տարված չորս եկեղեցականները, իրավամբ, դիտվում էին իբրեւ ըմբոստներ, որոնք լինելով Հայոց եկեղեցու պաշտոնյաներ՝ հանդգնել էին դավաճանել նրան և այդ պատճառով շատ նեղություններ կրեցին Մայր Աթոռում: Նրանք, ի վերջո, իբրեւ թե զղջացին, և երբ Ախալցխայի հռոմեադավանների կողմից, ի պաշտպանություն նրանց, «կարի լրբութեամբ և ընդդիմութեամբ լի» նամակ եկավ կաթողիկոսին, հիշյալ չորս

սը նրանց հանդիմանական նամակ հղեցին: Նրանք խնդրում էին իրենց ազատ արձակել, սակայն կաթողիկոսը գիտակցաբար նրանց բանտում պահեց երեք տարի, մինչև որ ռուսների դեմ սկսված պատերազմի ժամանակ ախալցխացիները դիմեցին հրամանատար Մուսթաֆա փաշայի միջնորդությանը: Նա նրանցից նախապես գրություն վերցրեց, որ այլևս աղթարմայության չեն հարի, այդ գրությունն ուղարկեց կաթողիկոսին, և վերջինս էլ Կ. Պոլիս գրեց, և նրանց արձակման հրովարտակն ստացավ: Նրանք 1771-ին ազատվեցին ու վերադարձան Ախալցխա: Նրանցից Լեւոնյանն ու Ավթանդիլյանն անմիջապես հեռացան Հռոմ և այնտեղ եպիսկոպոսական պաշտոնի հասան, իսկ մյուս երկուսը մնացին Ախալցխայում, ուր աղթարմայությունը, ցավոք, արմատներ էր ձգել: Եվ հետագայում էլ կովկասյան գավառներում հռոմեադավանության գլխավոր կենտրոնն Ախալցխան էր:

Սիմեոնն օսմանյան հրովարտակներն օգտագործեց Բագրեւանդ գավառում տարածվող հռոմեադավանության դեմ ուղղակի դիմելով տեղի փաշա Աբդիին, որը Սիմեոնի միջնորդությամբ ա-




զատություն ստացած Աբդի բեյն էր: Վերջինս էլ, ենթարկվելով պետական հրովարտակին, նախապես ձեռքազրկեց գլխավորներից յոթ հոգու, որոնք հանձնվեցին Բագրեւանդի առաջնորդ Չաքարիա վարդապետին՝ Էջմիածին տարվելու համար, և քանի որ նա հապաղում էր լեզգիների արշավանքի պատճառով, կաթողիկոսը 1769 թվի օգոստոսի 16-ին նամակ գրեց նրան՝ միամտացնելով, թե վտանգ չկա, և նա կարող է նրանց բերել: Չաքարիան նրանց անմիջապես բերեց և օգոստոսի 18-ին շնորհակալական նամակ գրեց Աբդի փաշային: Սրանք էլ շատ համառ չգտնվեցին և ետ կանգնեցին աղթարմայությունից, ուստի Չաքարիա վարդապետը սեպտեմբերի 14-ին, նրանցից երկուսին վերցնելով, ճանապարհվեց դեպի Բագրեւանդ: Մնացածները Սիմեոնի կողմից ազատվեցին և ետ վերադարձան որոշ ժամանակ անց: Վրեժ չկար, կար պայքար՝ հանուն Հայ Առաքելական եկեղեցու և հայադավանության: Իսկ դրա համար երբեք չի կարելի մեղադրել Սիմեոն կաթողիկոսին:

Սիմեոն կաթողիկոսը նույն ձեռով վարվեց նաեւ այլ եպիսկոպոսների ու վարդապետների հետ, որոնք լինելով ինչ-ինչ շահագրգռություններից՝ հարել էին հռոմեադավանությանը:

Շարունակությունը՝ էջ 4



ՎԱՐԴԱՎԱՌԻ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



Սկիզբը՝ էջ 2

ԽՆՁՈՐԻ ՊԱՍԸ

Ինչպես որ եկեղեցական կանոնացուցված սովորությամբ մինչև Տիրամոր Վերափոխման տոնին կատարվող խաղողորհնեքի արարողությունը խաղող չէին ուտում, այնպես էլ ժողովրդական տարածված սովորությամբ մինչև Վարդավառը խնձոր չէին ուտում: Այս սովորությունն անվանվում էր «Խնձորի պաս»:

Ինչպես գրում է Ե. Լալայանը,

«Մինչև Վարդավառ խնձոր չեն ուտում՝ մեղք համարելով այդ այնպես, ինչպես որ զգուշանում են խաղողից մինչև Աստվածածնի տոնի օրը, երբ օրհնում են խաղողը»:

Այս սովորության մասին «Ծաղիկ» հանդեսի՝ Վարդավառին նվիրված հոդվածում ասվում է. «Աստուածածնի և ուրիշ սուրբերու պատկերներու առաջ բուրումնաւէտ կարմիր խնձորներ կը շարեն: Եկեղեցին կը լենայ անո՛ւշ հոտերով: Մինչև Վարդա-

վառը խնձոր չեն ուտեր, ինչպես Վերափոխումէն առաջ խաղող չեն ուտեր: Խնձորը զատկական հաւկիթին պէս Պատարագին ցոյց տալու սովորութիւնը տեղ տեղ կը մնայ»:

Ծիսական ընդունված կարգով պահքը լուծվում է որոշակի հանդիսավորությամբ և համապատասխան արարողություններով, ինչպես որ Առաջավորաց պասն էր լուծվում՝ փոխինձ ուտելով:

Հայաստանի տարբեր շրջաններում նույն ձեռով Վարդավառին նախորդող շաբաթ գիշերը դեգեր էին վառում և նրանց մեջ խնձոր խորովում և ուտում, որով «լուծվում էր» խնձորի պասը:

Վերջինիս ազգագրական գույնը նկարագրությունները գտնում ենք Նաեւ Պ. Պոռոյանի «Սոս և Վարդիթեր» վեպում:

Այս և շատ ուրիշ հետաքրքիր տեղեկություններ, կապված Վարդավառի ծիսական խնձորի վերաբերյալ, գտնում ենք ինչպես Ե. Լալայանի, Գարեգին եպս Սրվանձտյանցի, այնպես էլ ազգագրական մի շարք աղբյուրներից ու բանահավաքների ավանդած տեղեկություններից:

Տղաների և աղջկաների ուրախություններով ուղեկցվող Վարդավառը նաեւ նշանադրու-

թյունների օր էր, ինչպես Նաեւ՝ ծանոթանալու և սիրահարությունների: Ինչպես գրում է Ս. Փոքրեշյանը. «Վարդեւորի» ուխտագնացությունը հարս ընտրելու տեղ էր: Երիտասարդները լավ հագնված, խումբ-խումբ ման էին գալիս պարտեզում: Աղջիկները նույնպես զբոսնում էին, իրենց ցույց տալիս «կտրիճներին»: Հարյուրավոր վրաններում կատարվում էին բազմաթիվ նշանդրեքներ:

Նոր Նախիջեւանի նշված երիտասարդները Վարդավառին Նաեւ ուխտի էին գնում Ս. Կարապետ, որովհետեւ «Նախիջեւանցի

կտրիճներն յուրյանց «մուրագին» հասնելու համար համարյա թե միշտ ուխտած են լինում Ս. Կարապետի գերեզմանն համբուրելու»:

Նորահարսների համար Վարդավառը նշանավորվում էր Նաեւ նրանով, որ Չատկին հաջորդող Կանաչ կիրակիից հետո երկրորդ անգամ էին գնում հայրական տուն: Ինչպես գրում է Վահան վրդ. Տեր-Միսայանը. «Նոր հարսները Վարդավառին երկրորդ «դարձ» կերթան 15 օրուան համար, և կը մնան իրենց հօրենական տան մեջ»:


Շարունակելի
ԱՆՆԱ ՊՈՐՈՍՅԱՆ

Նոր նշանակումներ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ կատարվել են եկեղեցականների նոր նշանակումներ:

Արսեն քին. Սարոյանը, ազատվելով Բանակի առաջնորդությունում ստանձնած իր պարտականություններից, ծառայության է կոչվել Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանում, Երեւանի Սբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցու հոգեւոր սպասավոր Սեւակ քին. Գաբրիելյանն իր ծառայությունը կշարունակի ԱՄՆ հայոց Արեւելյան թեմում: Հրաչ քին. Մուրադյանն իր հոգեւոր սպասավորությունը կբերի Բուլղարիայի հայոց թեմում, Օշին քին. Հայրապետյանը՝ Արթիկի թեմում, Հեթում քին Թարվերդյանը՝ Ռումինիայի հայոց թեմում, և Հարություն քին. Սեփանյանը՝ Արգենտինայի հայոց թեմում:

Լրատվական կյութերը՝
ՄԱՅՐ ԱՅՈՒՆ ՄԲ ԷՋՄԻՍՏԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՍՏԱՎՈՐԳԻ



ԱՐՁԱԿ

Սկիզբը՝ թիվ 11

Այս տեսակետից Մաթեոսյանի ստեղծագործության խոշոր հաղթանակը կարելի է համարել «Տերը» վիպակը: Տերը՝ Ռոստոմ Սարգսյան-Մամիկոնյանը, անտառապահ է: Բայց ահա նրա հայրենի գյուղը, որը քայքայվում է, կցել են կողքի գյուղին, միացրել մեկ տնտեսության մեջ: Միացումը հանգեցրել է անհոգի վերաբերմունքի քայքայվող գյուղի հանդեպ: Ոչ միայն տներն են լքվում, եւ հայրենի գյուղը դառնում է սոսկ ամառանոցային կացարան, այլեւ մարդկանց լքում է իրար հանդեպ, հայրենի եզերքի հանդեպ, աշխատանքի հանդեպ եղած վերաբերմունքը: Ու այդ անբարոյականացող կյանքի հերոսներն աստիճանաբար կյանքից դուրս են մղում բուն երկրի տիրոջ՝ անտառապահին, որովհետեւ նրանք գողանում էին, իսկ նա պաշտպանում էր անտառը, որովհետեւ նրանք միմյանց հանդեպ ունեցած հարաբերությունները հիմնում էին կեղծիքի, քծանքի ու խաբեության վրա, իսկ նա հպարտ էր ու առաքինի, ինքնիշխան ու կարգադրող: Նրանք երկիրը ծախողներն էին, նա երկրի տերն էր: Բայց ժամանակը նրանց օգտին էր, եւ Ռոստոմը ոչ միայն գրկվում է իր պաշտոնից, դուրս մղվում կյանքից, այլեւ մտնում անժառանգ: Անժառանգությունը խորհրդանշական իմաստ ունի այն առումով, որ Ռոստոմի պես մարդիկ գնալով վերանում են կյանքից:

Մաթեոսյանի ստեղծագործության հաջորդ հիմնական խնդիրը կյանքի տառապագին երջանկության նվաճումն է, ինչն առավել խորությամբ արտացոլված է «Բեռնաձիթը» շարքի պատմվածքներում եւ «Երկրի ջիղը» վիպակում: Քիչ ընդհանրացված ու

վերացարկված հայացքով Նայելիս գրեթե ոչ մի տարբերություն չի կարելի տեսնել Ալիոյի՝ չարքաշ ու տանջված բեռնաձիթու եւ Աղուսի՝ դժվարին կյանք ապրած կնոջ միջեւ: Սրանք ծնվել են որպես կյանքի որբեր եւ իրենց գոյության ամբողջ ընթացքում որբի չարքաշությամբ են մաքառել մի պատառ հացի եւ մի ծամածոված, գունաթափ երջանկության համար: Կյանքի որբերի կողքին հեղինակն ստեղծում է Նաեւ նրանց հակապատկերները: Մի կողմից Ալիոն է, մյուս կողմից՝ փառահեղ ու հրեղեն Նարինջ զամբիկը, նարնջագույն հովատակին, որը կկծոտի ու կծվատի չարքաշ բեռնաձիթուն, մի կողմից Աղուսն է, մյուս կողմից՝ ծորում հսկայական մարմինը գետափի արեւին տված վիթխարի կինը, մի կողմից «Սկիզբը» պատմվածքի կյանքի դառնությունների միջից աշխարհին նայող պատանի հերոսն է՝ Արայիկ Զառյանը, մյուս կողմից՝ Երես առած, շոյված ու փայփայված մեկ ուրիշ պատանի հերոս՝ Լեռնիկ Արզումանյանը, որը կծեծի Արայիկին, իսկ Արայիկը չի կարողանա ձայն հանել, որովհետեւ փոքրուց շիլ Եղըշի տղա են ասել, ծաղրել են ու ծծել, արհամարհել ու թունավորել նրա ու նրա նմանների կյանքը: Իսկ հետո հեղինակը կփորձի վրիժառության մղել իր տանջված ու տառապած հերոսներին («Ծառերը»), բայց չի կարողանա, որովհետեւ կյանքի դառնությունը նրանց մեջ սպանել է ամեն մի ուժ, եւ նրանց մեջ ոչ թե բարությունը, այլ խեղճությունը կմեղսի վրեժի ամեն մի զգացողություն: Իսկ վրեժը պետք էր կյանքի արհամարհանքն սպանելու, ստորադասների դեմ կռվելու համար, սակայն այդ զգացողությունը մեռած է նրանց մեջ, եւ նրանց արյունը երբեք էլ «գրնգուն ու քինոտ» չի դառնա:

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1960-1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Յեղիսակի համակրանքը կյանքի տառապանքը քաշած Աղուսի, բեռնաձիթու եւ վիրավորված ու անպատված զգացմունքների տեր շիլ Եղըշի տղայի կողմն է, որովհետեւ նրանք են երկրի ջիղը, կյանքի արմատը: Եվ անգամ փառաբանելով բնության շքեղ գեղեցկություններից մեկին՝ նարնջագույն հովատակին, նա հետագայում, երբ կրկեսում տեսնում է ձիուն շոյված ու վարժեցված տեսքով, վերջնականապես ճշտում է իր վերաբերմունքը եւ զգում, որ ատում է նրան, քանի որ իր մեջ «կարծր է բեռնաձիթն»:

Տառապանքի եւ դժվարին կյանքի լլկված պոեզիան՝ տխուր ու թախծոտ, բայց Նաեւ իր գոյատևման ճիգերի մեջ համառ, կարծրություն է ստանում «Երկրի ջիղը» վիպակում: Ծանր կյանք քաշած մարդու դժվարին ճակատագրի նկարագրություն է ամբողջ վիպակը: Կյանք չտեսած, մի լավ օր չապրած կին է Աղուսը: Ամբողջ կյանքում սպասել է մի լավ բանի, բայց կյանքն այնպես է կտորում նրան, ծամծմում իր մամլակի մեջ, որ թվում է, թե ուր որ է նա կհոգնի մաքառելուց եւ կդադարի դիմադրել կյանքի հարվածներին: Երեք օրական է եղել՝ մեռել է մայրը, դարպասեցի մերացուն նրան օր չի տվել, հայրը սնել է դատարկ խոստումներով, հարս է եկել Ծմակուտ, բզկտվել տնեցիների կողմից, արհամարհված ու կիսաքաղց վիճակում օրեր է անցկացրել, նրան «առնաուտ» են կանչել ու ծծել են «աղի արտասուք են դարձրել» նրան վիճակված ուրախությունները: Բայց նա ապրել է, ապրել է ճամփեգրի տրորված խոտի նման, տան դռանը կապված ծեծված, բայց հավատարիմ շան նման եւ ոչ միայն դիմացել է կյանքի հարվածներին, այլեւ տունուտեղ է դրել, երեխաներ մեծացրել, կռվել իր իրավունքների համար եւ հիմա, հյուծված ու մաշված, գնում է քաղաք, գնում է մեծ որդու տուն ու նրան բաժին է տանում: Թվում է, թե հասել է երջանկության րոպե...:

Դժվար ու ծանր կյանքի այս պատկերներում Հ. Մաթեոսյանի հերոսները երեւում են անվերջ մաքառումների մեջ եւ կյանքի գնով նվաճում իրենց ապրելու իրավունքը: Յենց այս դժվարին նվաճումն է, որ ավելի արժեքա-

վոր է դարձնում նրանց հաղթանակները:

Մաթեոսյանի ստեղծագործության հաջորդ շերտը կապվում է «Խումբար» վիպակի հետ, ուր մեկ օրվա անցուդարձ ընդգրկող դեպքերի մեջ նա ներկայացնում է այնպիսի մի հերոսի, որի ակունքները գտնվում են գյուղում եւ կապվում են ծմակուտյան մթնոլորտի հետ, իսկ ինքը հիմա կյանքի վիճակներ է ապրում աշխարհի խաչմերուկներից մեկում՝ մի մեծ քաղաքում եւ ակունքների ու ներկա օրերի զուգակցումով ամբողջացնում իր զգացողությունների համակարգն ու գաղափարների շղթան: Գյուղում հերոսի կյանքի արմատներն են, նա կյանքի կենսահյուրեր է ներծծում այդ միջավայրից, բայց ճյուղերը ուրիշ ջամփների առաջ են տարուբերվում: Արմատի ու ճյուղերի հակադրություն թեեւ կա, բայց դա, հակադրություն լինելով հանդերձ, Նաեւ միասնական ամբողջություն է, ճյուղերը գալիս են շարունակելու արմատներին: Ծմակուտյան կյանքը ուրիշ վիճակների մեջ է պահում մարդկանց, իսկ նոր կյանքն ստեղծում է միանգամայն այլ վիճակներ, որոնք եւ դրդում են հերոսին իր մեջ հայտնաբերելու նոր գաղափարներ ու զգայական շարժումներ: Բեռնաձիթի ու դժվարին կյանքի պատկերները փոխարինվում են մտավոր հույսով, եւ նրա հերոսը՝ Արմենակ Մաքառանյանը, դրսևորում է ժամանակակից կյանքի զգացողության միանգամայն նոր կողմեր: Նա սկսում է խորհել կյանքի եւ արվեստի կապի մասին, տեսական եզրակացություններ անել այդ ամենից եւ մի տեսակ ծրագրավորել իր ըմբռնումներն ու դրույթները: Ահա այդ հերոսի եւ Եվա Օգերովայի խոսակցությունից մի հատված. «Անտոնիոսին քեզ դո՛ւր եկավ», - հարցրեց, «Այո՞», - ասացի ես, «Նա բացահայտում է կյանքը շարժող նախնական բնազդները», - ճշգրիտ ու սառը արձանագրեց նա: Այս ձեռնակերպումը խորհրդանշում է Նաեւ Մաթեոսյանի արվեստը, որովհետեւ նա եւս, մանրագին դիտումներով, հետամուտ է կյանքը շարժող նախնական բնազդների իմացությամբ ու բացահայտումով նկարագրելու իր հերոսների վարքագիծը, պահվածքը,

հոգեբանական վիճակները:

Այնուհետեւ նրանք խոսում են ձեւի ձեւի մասին, փորձում շոշափելի դարձնել ձեւի ձեւի ձեւի էությունը եւ հայտնաբերել կյանքն ընկալելու նոր տարբերակներ: Խոսակցության մեջ հասունանում են կյանքի ու արվեստի հարաբերության ճշտման հարցերը եւ հանգում Մաթեոսյանի արձակի համար կարեւոր մի դատողության եւս. «Լսիր, դա քեզ է վերաբերում, - դիմում է Օգերովայն Մաքառանյանին, - գյուղն այն խաչմերուկը չէ, որտեղ խճճված լինեին քսաներորդ դարի նորագույն գծերը: Գյուղի նյութով անհնար է քսաներորդ դարի գրականություն անել...»:

Այս բանավիճալին շեշտը հեղինակը սրում է այն պատճառով, որ վերստին, այս անգամ քաղաքային կյանքի պատկերումով, կրկնի իր միտքն ու ասի, որ կարելի էր գյուղը կամ քաղաքը չէ, այլ գրողի ստեղծագործական հայացքը, այլ բառով՝ աշխարհայացքը:

Աղուսի եւ Ծմակուտի միջոցով բացահայտվում է կյանքի մի շերտ, Մաքառանյանի, Օգերովայի եւ մեծ քաղաքի միջոցով՝ մեկ այլ շերտ, երկուսն էլ կարելի է նույն արդիական:

Մաթեոսյանն իր նյութի մեջ մի ամբողջ աշխարհի հայտնաբերող գրող է: Իսկ նրա բանարվեստն արժանի է առանձին ու մանրակրկիտ ուսումնասիրության: Նա ոչ թե սովորական ձեւով պատմում է, այլ ներկայացնում, կենդանագրում, մանրամասներով ստեղծում ամբողջի տեսանելի պատկերը: Նրա ոճի ինքնատիպությունը պայմանավորված է կյանքը հնարավորին չափ տեսանելի, շոշափելի ձեւով պատկերելու հմտությամբ: Նա կարողանում է բնականորեն վերարտադրել հոգեվիճակն ու զգացողությունը, բնագույների շարժումն ու բնապատկերը: Նրա ցուցադրած կյանքի պատկերը երեւում է ամբողջությամբ ու լրիվ՝ իր լացով ու տխրությամբ, տառապանքով ու խեղճությամբ, կոտորված ծիծաղով ու պահից ծնվող երգիծանքով, վիճակի հասունացման բնականոն ընթացքով ու զգացմունքների խլիրտով, մի խոսքով՝ լայնքով ու խորքով:

Շարունակությունը՝ էջ 7

ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

ՄԻՄԵՆՆ Ա ԵՐԵՎԱՆԴԻ (1763-1780)

Սկիզբը՝ էջ 3

Նրանցից մեկը Հովհան Ամգեցին էր՝ Գլակա առաջնորդը, որը Շամախեցու մահից հետո կաթողիկոսության թեկնածու դարձավ: Զկարողանալով կաթողիկոս դառնալ՝ նա փորձեց Մայր Աթոռից անկախանալ՝ հռոմեադավանության դիմելով: Նա փոխում էր առաջնորդներին, ուխտավորների էր կողոպտում, հայրապետական կոնդակներ էր գրում եւ հանդգնում էր շնորհներ բաշխել, եկեղեցական գանձերը եւ հարստությունները գրավել, նվիրակներ ուղարկել այս ու այն կողմ: Շահագործում էր սբ Կարապետի անունը եւ դերբեյ կամ տեղական բռնապետ Մաքսուդ բեյին իր շահերի մասնակիցը դարձրեց: Սիմեոնը լրջորեն հանդես եկավ նրա դեմ: Նա

բանադրեց նրան եւ կարգալուծ արեց: Հովհանը գլուխը կորցրած՝ կարնեցի մի շարք գլխավորների միջնորդությանը դիմեց՝ Էջմիածին գնալու համար: Ակոռի գյուղում նա հանդիպեց կաթողիկոսին եւ զղջաց իր արարքը, արտասուք թափեց ու ներում խնդրեց: Հետո Մայր տաճարում նա խոստովանեց, թողություն ստացավ եւ արձակվեց: Հետո գնաց Կ. Պոլիս եւ այնտեղից վերադարձավ իր առաջնորդությանը: Սիմեոնը նման քայլեր ձեռնարկեց Նաեւ Կարսում, Արաբկիրում, Դիարբեքիրում, Արդվիկում եւ այլ վիճակներում:

Սիմեոնը մեծ գործունեություն ծավալեց՝ մի կողմից հաստատուն կանոններ մտցնելու եւ մյուս կողմից պատշաճ փոփոխություններ կատարելու առումով: Նա



հենց սկզբից էլ նման մտադրություններ ուներ, սակայն շարժառիթը եղավ պատրիարք Բասմաջյանի՝ ժողովրդի անունով գրված մեկ գրությունը, որի մեջ խնդրանք

կար կարգելու Գրիգոր Լուսավորչի նշխարների գյուտի կիրակին: Հավանաբար դրա շարժառիթը հռոմեադավանների բռնած գիծն էր, ինչը երեւում է Վենետիկի օրացույցներից: Հայոց Եկեղեցու ծիսական կարգերը ցույց են տալիս, որ կիրակիներից դուրս կարգադրված տոն կամ կիրակի պահելու սովորություն չի եղել, հատկապես՝ սրբերի տոների համար: Անգամ Աստվածահայտնության եւ Համբարձման կիրակիի փոխադրվելը հեշտորեն երեւում է կրոնական եւ ծիսական պատշաճությունից, ինչպես դա արվում է Պայծառակերպության, Վերափոխման եւ Խաչվերացի տոների համար: Հարկ է նշել, որ Լուսավորչի շաբաթ օրը կիրակի պահելու սովորությունը մինչեւ 1766 թիվը չի եղել: Դա հունական եւ լատինական սովորություն էր, որին փորձել էին հետեւել հռոմեադավանները, եւ Կ. Պոլսի ժողովուրդն էլ դիմել էր կաթողիկոսին: Սիմեոնն այդ առաջարկը հույժ կարեւոր եւ կարգավորման արժանի համարեց:

Շարունակելի

Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ ԳԱՍ թղթակից անդամ, պրոֆեսոր

Տայ ժողովրդի դասկերումը օսարագգի ճանադարհորդների եւ միսիոներների գրվածքներում

Սկիզբը՝ էջ 2

... Նրանք զբաղվում են մե-տաքսի, բրդի ու համանման թանկարժեք ապրանքների ա-ռեւտրով»,- ասում իտալացի ճա-նապարհորդն իր գրքում (տե՛ս Hamalian L., ևշվ. աշխ., էջ 117): Որքանո՞վ են օբյեկտիվ Մարկո Պոլոյի պնդումները: Այս հարցի առավել ճշմարտացի պատաս-խանը կարելի է ստանալ, եթե ի-տալացի ճանապարհորդի պն-դումները համեմատենք այլ աղ-բյուրների հետ: Այն, որ հայերը վաղ անցյալում քաջարի ռազ-միկներ էին, հաստատվում է բազմաթիվ պատմական աղ-բյուրներով, մասնավորապես դրա մասին է գրել ամերիկացի Ջորջ Յեփլինգսը իր «Հայաստանի միջով ձիու թամբին» ճանապար-հորդական գրքում (տե՛ս Her-worth G., Through Armenia on Horseback, New York, E. P. Dutton & Co., 1898, էջ 135, 330): Ինչ վե-րաբերում է Մարկո Պոլոյի երկ-րորդ պնդմանը՝ կապված հայերի երկչոտության հետ, ապա այս-տեղ են ուրոշակի ճշմարտու-թյուն կա: Սակայն մեզ հետաք-րքում է ոչ այնքան փաստի մե-խանիկական արձանագրումը, այլ դրա պատճառահետեանքա-յին ասպեկտը: Ինչպե՞ս պատա-հեց, որ հանդուգն ու խիզախ հա-



յերի հետևորդները հետզհետե դարձան երկչոտ: Այս իրողությու-նը, թերեւս, անհնար է բացատրել լոկ մեկ պատճառով: Այն, որ հայ ժողովրդի մի զգալի մասը կորց-րել էր իր մարտաշունչ ոգին, կա-րելի է բացատրել նրա քրիստո-նեական հավատով: Հարյուրա-մյակներ շարունակ հոգեւոր այ-րերը հայության մեջ սերմանում էին քրիստոնեական անհուն բա-րության ու ներողամտության սկզբունքները՝ վկայակոչելով Քրիստոսի պատգամը՝ «չարին հակառակ չկանգնել». այլ եթե մե-

կը քո աջ ծնոտին ապտակ տա, նրան մյուսն էլ դարձրու» (Մատթ. Ե 39): Կասկածից վեր է, որ քրիստոնեությունը մարդկու-թյան ամենաառաջադիմական ու ամենահումանիստական կրոնն է: Ինչի՞ համար էր առհասարակ ստեղծվել քրիստոնեական հա-վատը. ակներեաբար մարդ-կանց ավելի քաղաքակիրթ, ավե-լի բարի, ներողամիտ ու հան-դուրժողական դարձնելու հա-մար: Եթե չլինեի քրիստոնեու-թյունը՝ իր վսեմ գաղափարներով հանդերձ, մարդկությունը, ըստ Ե-

րեւոյթին, դեռ երկար կխարխա-փեր հեթանոսության խավարի մեջ, դեռ երկար կուղղորդվեր բարբարոսական բնագոյներով: Ծիշտ է, քրիստոնեական հավատը տակավին չի հաջողել մաքրել մարդկային հոգին բոլոր արատ-ներից, սակայն սա բավականին երկարատե գործընթաց է եւ հա-մառ ու հետեւողական աշխա-տանք է պահանջում: Բայց եւ այնպես մի բան ակնհայտ է. քրիստոնեական հավատի ներ-մուծումն առնվազն մեկ կարեւոր քայլ էր դեպի մարդկության հո-գեւոր նորացումն ու կատարելա-գործումը: Բայց այժմ վերադառ-նանք մեր հողավաճի բուն թեմա-յին եւ փորձենք պարզել, թե որ-քանով է քրիստոնեության ընդու-նումը նպաստավոր եւ օգտավետ եղել կոնկրետ հայ ազգի համար: Քրիստոնեության դրական դերի մասին մենք արդեն բավականա-չափ խոսեցինք, բայց որքանո՞վ է ճիշտ քրիստոնեական վեհ գա-ղափարների կիրառումը մի ժո-ղովրդի կողմից, որը ճակատագ-րի ու պատմական հանգամանք-ների բերումով ստիպված էր ապ-րել անհանդուրժողական ու վայ-րագ ազգերի անմիջական հարե-ւանությամբ, իսկ հաճախ նաեւ՝ նրանց գերիշխանության ներքո: Առողջ տրամաբանությունը հու-

շում է, որ անհնար է գոյատեւել բարբարոսական միջավայրում, եթե ինքը չես ուզում կամ չես կա-րող առաջնորդվել բարբարոսա-կան օրենքներով: Այս ճշմարտու-թյան մասին է վկայում համաշ-խարհային պատմության ողջ ըն-թացքը. շատ ազգեր, ովքեր ա-ռավել առաջադեմ էին ու քաղա-քակիրթ եւ իրենց ջանքերը գլ-խավորապես ուղղորդում էին հո-գեւոր կյանքին՝ մշակույթին ու գիտությանը, եւ ոչ թե ռազմա-կան արվեստին, ջախջախվում էին հետադեմ ու խավարամոլ ժողովուրդների կողմից: Որպես վառ օրինակներ կարելի է բերել շումերներին ու խեթերին, որոնք նշանակալից ավանդ ներդրեցին համաշխարհային քաղաքակր-թության մեջ, իսկ այնուհետեւ ֆիզիկապես բնաջնջվեցին, մա-սամբ էլ ձուլվեցին օտար ազգե-րի հետ: Ի դեպ, հայերը, ի տար-բերություն շումերների ու խեթե-րի, առավել կենսասունկ գտնվե-ցին եւ կարողացան հաղթահա-րել պատմության դաժան փոր-ձությունները՝ պահպանելով թե՛ իրենց գոյությունը, թե՛ հավատն ու ազգային ինքնությունը եւ թե՛ հայրենյաց երկրի մի փոքր մասը: Ասենք ավելին՝ հայ ժողովուրդը ոչ վաղ անցյալում ազատագրեց պատմական Արցախը եւ Նույ-նիսկ նվաճեց ադրբեջանական ո-րոշ տարածքներ:

Շարունակելի

Տիգրան ՄԱՆՈՒՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

ԱԹ-ԹԱՄՆԱՀԻ

Սկիզբը՝ թիվ 11

ՄՈՒՐԱՅԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ահա թե ինձ ինչ պատմեց Մուհամմադ իբն Խիլալ իբն Աբ-դալլահը՝ դադի Ահմադ իբն Սա-յյարի խոսքից.

«Մի շեյխ, որ առեւտուր էր ա-նում Օմանում, ինձ պատմեց, որ մի անգամ լինելով Ուբուլում եւ պատրաստվելով ծովային ճա-նապարհորդության՝ մզկիթի մոտ տեսել է մի աղքատի, որ խո-սում էր գեղեցիկ ու պատշաճ ո-ճով եւ ողորմություն էր խնդ-րում»:

Պատմողը շարունակեց.

«Ես խղճացի եւ մի քանի լիակշիռ դրրիեմ տվի նրան: Դրանից անմիջապես հետո ուղե-ւորվեցի Օման, ուր մնացի մի քանի ամիս: Ապա ճանապարհ-վեցի դեպի Չինաստան եւ բարե-հաջող տեղ հասա: Մի օր նայեցի՝ տեսա այն մարդուն: Նա փողո-ցում կանգնել եւ ողորմություն էր խնդրում: Ուշադրություն դարձրի եւ ճանաչելով նրան՝ ասացի. «Հանուն ալլահի, դու մեկ Ուբուլ-յում ես ողորմություն խնդրում, մեկ՝ Չինաստանում»: Նա պա-տասխանեց. «Նախկինում ես ե-րեք անգամ եղել եմ այստեղ, իսկ այժմ եկել եմ չորրորդ անգամ՝ գոյության միջոց հայթայթելու: Ողորմություն խնդրելն ինձ հա-մար ինչ-որ մի բան ստանալու միակ միջոցն է: Դրա համար ես լինում եմ մե՛րթ Ուբուլյում, մե՛րթ՝ այստեղ»: Այդ մարդու ծանր վի-ճակն ինձ զարմացրեց»:

Ահա թե ինչ պատմեց ինձ Ա-բու-թ-Թայյիբ Մուհամմադ իբն Ահմատ իբն Աբդ ալ-Մուսինը, որ ալ-Ախվազում դատարանի դռ-նապան է եղել:

«Ինձ Բաղդադի մի աղքատ ասում էր իրենց ավագի մասին, որը մուրացկանությամբ այնպես է հարստացել ու բարգավաճել, որ հնարավորություն է ստացել թողնելու իր այդ գործը, բայց ու-րիշներին սովորեցնում էր ամեն կարգի հնարքներ: Աղքատը նրան հարցրել է՝ որտեղից է նրա հարստությունը գոյացել: Նա պատասխանել է. «Ես սովորեցի ասորերեն՝ կարդալու համար նրանց աղոթագրքերը: Դրանից հետո վանական հազուստով գնացի Սամարա, ուր այն ժամա-նակ թյուրք գորապետներն էին: Նրանցից մեկին խնդրեցի հան-դիպել: Երբ ինձ թույլատրեցին, ասացի. «Ես այսինչ մենաստանի վանական եմ (նա նշեց Սիրիա-յում գտնվող մի վանք), ուր ես մնացել եմ երեսուն տարի: Ես քնեցի ու երազում տեսա մարգա-րեին, թող ալլահն օրինի նրան եւ ողջունի: Նա մտավ մեր վանքը եւ ինձ հորդորեց իսլամ ընդունել: Ես համաձայնեցի: Հետո նա ինձ ասաց. «Գնա այսինչ գորապետի մոտ, թող նա քեզից ընդունի հավատքի խորհրդանիշը, որով հետեւ նա դրախտի բնակիչնե-րից է»: Ուստի ես ներկայացա, որ քո ձեռքից ընդունեմ իսլամը»:

Թյուրքը հիացավ, բայց չէր կա-րող արտաբերել հավատքի խոր-հրդանիշը եւ շփոթվեց: Այնժամ ես քանդեցի իմ մեջքից գոտին եւ արտասանեցի հավատքի խոր-հրդանիշը նրա ներկայությամբ: Նա ինձ դրամ, հազուստ եւ այլ ի-րեր նվիրեց հինգ հազար դրրիեմ արժողությամբ, եւ ես վերադար-ձա իմ կացարանը:

Հաջորդ օրը վանականի հա-զուստով գնացի ուրիշ գորապե-տի տուն, նրան ասացի Նույն բա-ները, եւ նա ինձ ավելի առատա-ձեռն պարգեւատրեց: Այդպես ես այցելեցի բոլոր նրանց եւ նրան-

ցից ստացա հիսուն հազարից ա-վելի դրրիեմ:

Մի անգամ գնացի նրանցից մեկի մոտ, եւ այնպես պատահեց, որ նա հյուրեր ուներ, գլխավորա-պես՝ գորապետներ: Ես պատմե-ցի երազս, իսկ հետո նրանց նա-յելով տեսա մեկին, որին ես ար-դեն այցելել էի սույն պատմու-թյամբ: Ես սարսափելի շփոթվե-ցի եւ ավարտելով պատմումս՝ ար-տասանեցի հավատքի խորհր-դանիշը, իսկ տանտերն այն ըն-դունեց ինձնից: Նա կարգադրեց նվերներ տալ ինձ, եւ ես դուրս ե-կա: Բայց ինձ հետեւեց նրա ստ-րուկը, եւ երբ ես որոշ չափով հե-ռացել էի տնից, նա բռնեց ինձ ու քարշ տվեց այնտեղ, ուր ապրում էր թյուրքը, որին դիմել էի: Ես հուսալքվել էի եւ ամենասարսա-փելի ելք էի սպասում: Ստրուկին ես առաջարկեցի այն ամենը, որ մոտս ունեի, որպեսզի նա արձա-կեր, բայց նա հրաժարվեց:

Հետո եկավ հարբած թյուրքը եւ ասաց. «Ի՛նչ է, դու որոշել ես հերթով ծաղրել բոլոր թյուրքերին եւ նրանցից դրա՞մ շորթել»:

Սարսափ պատեց ինձ, եւ ես ասացի. «Պարո՛ն, ես ընդամենը խեղճ աղքատ եմ, որն այդպես է վար-վում, որպեսզի գոնե ինչ-որ բան ձեռք բերի»:

Նա ինձ ասաց. «Դու մտածում ես, թե ես պատրաստ-վում եմ բացահայտել քեզ քո քա-ղաքում: Ո՛չ, ես այդպիսի մարդ չեմ: Եթե ես թույլ եմ տվել ինձ հետ այդպիսի կատակ անել, թող կատակեն եւ մյուսների հետ: Դու սրիկա չես»:

Այնժամ ես վճռեցի նրան զվարճացնել եւ առաջարկեցի ապտակել ինձ: Նա ծիծաղեց, գի-նի բերել տվեց ու սկսեց խմել: Ես սկսեցի զվարճացնել նրան, այն-պես որ նա ինձ իր մոտ պահեց, հազուստ տվեց եւ մի քանի դր-րիեմ:



Ապա նա կանչեց թյուրք շատ գորապետների: Ես նրանց մոտ գնացի այն մարդու զգեստով, ով վանասկում է ապտակ ուտելով: Եվ նրանք ուրախացան ու ծիծա-ղեցին ինձ վրա: Թյուրք տանտե-րը նրանց պատմեց ամբողջ եղե-լությունը, եւ նրանք զվարճա-ցան: Ես նրանցից դարձյալ ստացա բավարար չափով դրամ, իսկ հետո գնացի Բաղ-դադ, ծախսեցի՝ ինչ որ ինձ հա-ջողվել էր ձեռք բերել եւ գնեցի հող, որի եկամուտով ապրում եմ մինչեւ օրս:

ՋԻՉԱ ԳՅՈՒԴԻ ԱՌԱՄՊԵԼԸ

Որոշ զարմանալի տեսարան-ներ եւ աշխարհի հրաշալիքներ կան Վասիտի Սավադում:

Այս մասին ինձ պատմել են շատերը, այդ թվում՝ Իբն աս-Սա-րաջ անունով նշանավոր մեկը, նաեւ՝ Մուհամմադ իբն Աբդալլահ իբն Սահլը Համիդ ալ- Վասիտին, որի պապը՝ Աբու Բաքըր Մուհամ-

մադ իբն Սահլը, Վասիտի ամե-նահարգված մարդկանցից էր, իսկ հետո շատ տարիներ եղավ այնտեղի դատավոր: Այս պատ-մությունն իմ գրի առնելուց հետո Մուհամմադ իբն Աբդալլահը հաստատեց գրառածիս ճշտու-թյունը եւ ստորագրեց:

Ռուսաֆից ավելի քան մեկ փարսախ հեռու՝ ալ-Մայմուն գե-տի եզերքին, նաբաթիների կամ իրանցիների մի գյուղ կա՝ հայտ-նի Ջիզա անունով: Մարդիկ ա-սում էին, որ այնտեղ պահպան-վել են կրաքարով ու գիպսով կա-ռուցված հնագույն շինության ա-վերակներ, դրանց մեջ՝ զմբեթ՝ տաճարի նման, եւ ողորկ սեւ քա-րից վիթխարի մարդկային ար-ձան, որն այնտեղի բնակիչներն Աբու Իսհակ (բնաջնջման հայր) են ճանաչում, որովհետեւ ամեն անգամ, երբ որեւէ զորեղ մարդ փորձում էր տեղաշարժել, միշտ վնասվում էր, իսկ ոսկորները՝ ջարդվում:

Շարունակությունը՝ էջ 8

ՆՈՎԻՆ ՈՒ ՆՐԱ ՆՈՏԸ

ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ձեր հարցերին պատասխանում է Եղիա արքեպիսկոպոս ԿԱՉԱՏՐՅԱՆԸ:
Ձեր անունից հարցերն ուղղում է մեր թերթի արտահաստիքային թղթակից Անժելա ԿԱՉԱՏՐՅԱՆԸ:

- Մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Զրիստոսը Հովհաննու Ավետարանում ասում է. «Խաղաղություն եմ թողնում ձեզ, Իմ խաղաղությունն եմ տալիս ձեզ. ձեզ չեմ տալիս այնպես, ինչպես այս աշխարհն է տալիս. ձեր սրտերը թող չխռովվեն, եւ չվախենաք» (Հովհ. ԺՂ 27): Հայր սուրբ, ո՞րն է Զրիստոսի բերած խաղաղությունը, եւ ինչո՞ւ է Տերն ասում, որ այն վեր է այս աշխարհի տված խաղաղությունից:

- Հիշենք մարդու արարչագործության ժամանակները: Գիտենք, որ երբ Աստված ստեղծեց երկինքն ու երկիրը եւ նրանում եղած ամեն բան, ստեղծագործության վեցերորդ օրն ստեղծեց արարչության թագ եւ պսակ հանդիսացող մարդուն եւ ապա հանգստացավ Իր բոլոր գործերից: Աստվածային ստեղծագործության մեջ ամեն ինչ կատարյալ էր, ներդաշնակ ու խաղաղ: Բայց այդ երանական վիճակը երկար չտևեց... Մեղքի պատճառով ողջ արարչագործությունը տակնուվրա եղավ, խախտվեց ներդաշնակությունը, բնությունն սկսեց անկանոն դառնալ, մեջտեղ եկան հիվանդություններ: Եվ կամաց-կամաց կորցնելով ներդաշնակությունը՝ մարդը կորցրեց նաեւ իր խաղաղությունը, կորցրեց իր շնորհները, Աստծո հետ բարեկամությունը, սակայն Զրիստոսը մարդուն վերադարձրեց իր երանական վիճակին. Զրիստոսով

մարդը երկնքի արքայության ժառանգորդ դարձավ: Այդ խաղաղությունն աշխարհի խոստացած խաղաղությունը չէ, որը, ինչպես եւ աշխարհիկ ամեն բան, թվացյալ եւ խաբուսիկ է, մնայուն չէ: Մինչդեռ Զրիստոսի բերած խաղաղությունը հավիտենական է, դա այնպիսի հոգեկան, երանելի վիճակ է, որ մարդը վայելում է Աստծո ներկայությունը, բնակվում Աստծո մեջ եւ թույլ տալիս, որ Աստված էլ բնակվի իր մեջ:

- Հայր սուրբ, իսկ ինչպե՞ս է ձեռք բերվում այդ խաղաղությունը:

- Նախ մարդը պետք է իմանա, որ ինքը կրոնական արարած է եւ անընդմեջ կարիք ունի Աստծո հետ հարաբերության: Եթե մենք ապահովենք մեր հոգու սնունդը՝ Աստծո հետ մշտական հաղորդակցությունը, հոգին կսկսի այդ խաղաղությունը վայելել եւ հարատևել դրանում: Աստված ոչ թե պատերազմի, բաժանության, այլ սիրո, խաղաղության, միաբանության Աստված է: Իսկ ամեն պառակտում չարիք է:

- Սուրբ Հոգին կոչվում է նաեւ **խաղաղության եւ հեղուկության Հոգի:** Եվ գիտենք, որ **Մկրտության խորհրդով է մարդը որդեգրվում Աստծուն եւ դառնում Սուրբ Հոգու տաճար եւ բնակարան, այսինքն՝ նաեւ խաղաղության բնակարան, ուրեմն չմխրտված մարդը զո՞ւրկ է այդ խաղաղությունից:**

- Ոչ միայն խաղաղությունից, այլեւ քրիստոնեական շատ շնորհներից ու առաքինություններից է զրկված եւ անպաշտպան: Նա պարսպված չէ Սուրբ Հոգու գործությամբ: Կան մարդիկ, որոնք բնությամբ բարի են, առատաձեռն, բայց եթե մկրտված չեն, հեշտությամբ կարող են կորցնել այդ առաքինությունները: Չմկրտված անձը հոգեւորապես ծնված, Զրիստոսի լույսով լուսավորված չէ, շնորհներից զուրկ է: Դրոշմի խորհրդի ժամանակ մյուռնով դրոշմում ենք մկրտվողին, Սուրբ Հոգու շնորհը փոխանցում, քանի որ մյուռնը խորհրդանշում է Սուրբ Հոգին:

- **Երանի՜ խաղաղարարներին, որովհետեւ նրանք Աստծո որդիներ պիտի կոչվեն,- ասում է Տերը Լեռան քարոզում: Ովքե՞ր են խաղաղարարները, ինչպե՞ս են նրանք Աստծո որդիներ կոչվում:**

- Այս երանին այսօր այնքան անհրաժեշտ է մեզ: Մարդիկ այսօր այնպիսի հոգեկան լարվածության մեջ են, որ քչերի հետ է հնարավոր հանգիստ գրուցել: Հենց այդպիսի իրավիճակներում քրիստոնյան պիտի կարողանա հաշտության հոգով խաղաղություն մտցնել. դա կարող է լինել տանը, զուտ ընտանեկան միջավայրում, կարող է լինել աշխատավայրում եւ այլուր: Այստեղ է խաղաղարարի առաքինությունը, որ ինքը կարողանա հաշտություն մտցնել երկու իրար հետ



վիճող մարդկանց մեջ: Մեզ ամեն տեղ է պետք այդ խաղաղությունը: Բարկության պահին մարդը կարող է անդամալի սխալներ գործել, որոնց համար հետո իր ողջ կյանքում կարող է զղջալ:

- **Կարելի՞ է ասել, որ դժբախտ է այն մարդը, ով չի ճաշակել այդ խաղաղության քաղցրությունը, չունի հոգու խաղաղություն, նրա սրտում տեղ չկա խաղաղության հշխանի՝ Զրիստոսի համար:**

- Անշուշտ, Զրիստոսից հեռացած ցանկացած մարդ դժբախտ է, որովհետեւ կորցրել է ամենամեծ երջանկությունը՝ Զրիստոսի հետ լինելու երջանկությունը: Երբ մեկն իր խոնարհության մեջ վայելում է Տիրոջ ներկայությունը, զգում է Աստծուն իր մեջ, սրանից մեծ երջանկություն հնարավոր չէ պատկերացնել: Այս հոգեվիճակը չունեցող մարդն արդեն իսկ դժբախտ է, որովհետեւ երջանկությունն այլ տեղ է փնտրում: Ոմանք այն փնտրում են նյութական բարեկեցության, պաշտոնի, փառքի մեջ, բայց տեսե՛ք, թե Զրիստոսը որքան խոնարհ ու հեզ եկավ աշխարհ, բոլորովին չփափագեց մարդկանց կողմից փառաբանվել, թեեւ Նա արժանի էր ամեն տեսակի փառաբանության եւ մեծարման, մինչեւ անգամ ամենաանարգ

մահը հանձն առավ եւ դրանով հանդերձ՝ խաչի վրա արդթեց Իրեն խաչողների համար: Եվ երբ հարությունից հետո հանդիպում էր աշակերտներին, ասում էր. «Խաղաղություն ձեզ, թող ձեր սրտերը չխռովվեն»: Նա խոստացավ մեզ հետ լինել բոլոր օրերում՝ մինչեւ աշխարհի վախճանը: Մենք Զրիստոսով միշտ խաղաղ ենք: Սակայն խաղաղությունը չպետք է շփոթել անտարբերության հետ, որը չարիք է: Խաղաղ մարդն այն մարդն է, ով շուտ չի բորբոքվում, բարկանում, հեզության հոգի ունի: Զրիստոսն ասում է. «Սովորեցե՛ք Ինձնից, որ հեզ եմ եւ սրտով խոնարհ» (Մատթ. ԺԱ 29): Սա առաքինություն է, որը մեզ աստվածանման է դարձնում:

- **Սբ Պողոս առաքյան ասում է. «Ինչ չափով որ հնարավոր է ձեզ համար, բոլոր մարդկանց հետ խաղաղություն պահեցե՛ք» (Հռոմ. ԺԲ 18): Զ՞նք կարծում, որ հատկապես մեր օրերում, երբ ամեն քայլափոխի բախվում ենք տարբեր անարդարությունների, խռովվում ականա, կորցնում մեր հոգու խաղաղությունը, այս պատգամի իրագործումն անհնար է թվում:**

Շարունակությունը՝ էջ 8

ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ «ԿՏՐԻՃՎՈՐԱՅ ԵՂԲԱՅՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ» ԻԲՐԵՎ ԻՆՔՆԱԳԱՇՊԱՆԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Արքեպիսկոպոսի մարդկանց եղբայրությունների ավագները՝ մանկտավագները, գիշերով եւ գողունի, տնից տուն էին գնում՝ տեսնելու իրենց արքեպիսկոպոսի օգնականներին, աշակերտներին, բոլորի հետ խոսելու շուրջով: Նրանց զենք էին տալիս, զենք բացնում, որ օրհաս պայթելու ժամին, եթե իրենց գլխին պայթեր, ելնեին դիմադրության եւ պաշտպանության:

Վիգեն Խեչումյան

Հայ ժողովուրդն իր պատմության գրեթե ողջ ընթացքում ստիպված է եղել պայքարել օտար նվաճողների դեմ՝ մե՛րից հաղթանակելով, մե՛րից էլ՝ ընկնելով նրանց լծի տակ: Բոլոր խաղաղ ժամանակներում էլ ծաղկում են ապրել քաղաքներն ու շենքերը, զարգացել են գրականությունն ու արվեստը: Զաղաքներում մեծ թափ են առել արհեստներն ու առեւտուրը: Այս առումով պետք է հիշատակել հայ միջնադարյան քաղաքներ Անին, Ղվինը, Երզնկան, Կիլիկիայի քաղաքները՝ Սիսը, Տարսուղը, որոնք մեծ դեր են խաղացել Հայաստանի մշակութային կյանքում: Առանձնացնենք Երզնկա քաղաքը, որը դեռեւս 13-րդ դարում Հայաստանի գիտամշակութային եւ առեւտրաարհեստավորական խոշորագույն կենտրոն էր: 12-15-րդ դարերում այնտեղ այցելած ծանապարհորդներն այն նկատել են իբրեւ «հայաբնակ», «շեն ու մեծ» քաղաք, որի շքեղ բեմեզներն ու

պղնձե ամանները մեծ ճանաչում են ունեցել հեռավոր շուկաներում (տե՛ս Լ. Խաչիկյան, 1280 թ. Երզնկայում կազմակերպված «եղբայրությունը»): «Տեղեկագիր» Հայկական ՍՍՐ Գիտությունների Ակադեմիայի, թիվ 12, 1951, էջ 74): Երզնկան հայտնի է եղել նաեւ իր ոսկերիչներով ու արծաթագործներով, իսկ 17-րդ դարի տեղեկագիր Հակոբ Կարնեցին հիշում է, որ այնտեղ, բացի խաղողից, հացահատիկից, մրգաձառերից, մշակվում էր նաեւ բամբակ (նույն տեղում, էջ 75): Ուրեմն՝ իր հարստություններով չէր կարող չհետաքրքրել օտար նվաճողներին:

Անգամ 13-րդ դարում, երբ Հայաստանը գտնվում էր մոնղոլական ծանր լծի տակ, հայկական առեւտրական, արհեստավորական խոշոր քաղաքներում ստեղծվում էին երիտասարդական խմբեր՝ «եղբայրություններ», որոնց անդամները հիմնականում արհեստավորներ ու առեւտրականներ էին, բայց միեւնույն ժամանակ պատրաստ էին իրենց քաղաքը պաշտպանելու օտար նվաճողներից:

1280 թ. Երզնկայում կազմակերպվում է մի եղբայրություն, որի նպատակներից մեկը նույնպես ինքնապաշտպանությունն էր: Այս կազմակերպության համար կանոններ է գրել 13-րդ դարի հայ խոշորագույն մտածող ու բանաստեղծ Հովհաննես Երզնկացին՝ «Սահման եւ կանոնք միաբանութեան յեղբայրութիւն



միմեանց ի մայրաքաղաքս, որ կոչի Երզնկայ, ի թուիս ԶԻԹ (1280): Աստ հանդիպելով եւ ծերունի վարդապետն Գրիգոր Սանահնեցի, որ եւ գրեցաւ ի գլուխ եղբայրութեանս, եւ ես՝ նուաստս վարդապետ Յովհաննես Երզնկացի՝ գրեցի զսահման եւ զխրատ եղբայրութեանս եւ զահաւետ աւուտն որ ի սմանէ, առաջնորդութեամբ սուրբ հոգւոյն»:

Կանոններ գրելուց զատ՝ Նա մշտական կապ է ունեցել եղբայրության հետ, նրա անդամների համար խրատներ գրել (տե՛ս Ա. Սրապյան, Հ. Երզնկացի, Ե., 1958, էջ 74):

Երզնկայի եղբայրության մասին հիշատակում է Ալիշանը՝ կարծելով, թե Հովհաննես Երզնկացին կանոնները գրել է եկեղեցականների պատվերով (տե՛ս Ղ. Ալիշան,

Յուշիկք հայրենեաց Հայոց, հատոր Բ, Վենետիկ, 1870, էջ 474):

Այս հարցի ուսումնասիրությամբ հետազայում սկսեց զբաղվել ակադ. Լեւոն Խաչիկյանը: Իր մի հոդվածում (տե՛ս Լ. Խաչիկյան, 1280 թվականին Երզնկայում..., էջ 73-84) համակողմանի անդրադառնում է Երզնկայի եղբայրությանը եւ Հովհաննես Երզնկացու վերջ հիշատակված գործին:

Ուսումնասիրողն այն համոզմունքն է հայտնում, որ այդ կազմակերպության անդամներն արհեստավոր ու առեւտրական շերտերին պատկանող երիտասարդներն էին, որոնց նպատակն էր «բռնավորների» դեմ պայքարելը, ընկերոջը գործավիճ լինելը, ուրիշ վայրերից եկածների ոգևելը, հյուրընկալելը եւ այլն:

«Եղբայրության» հետ կապված որոշ հարցեր լուծվեցին, երբ Լ. Խաչիկյանը լույս ընծայեց Հովհաննես Երզնկացու «Սահման եւ կանոնք եղբայր»-ը (տե՛ս Լ. Խաչիկյան, Երզնկա քաղաքի «Եղբայր միաբանության» կանոնադրությունը (1280 թ.), Բանբեր Մատենադարանի, 1962, թիվ 6, էջ 365-376):

Պարզվեց, որ այդ կազմակերպության մեջ եղել են «ավագ» եւ «կրտսեր» անդամներ, եւ այն ղեկավարվել է «գլխավոր եղբայր» կողմից: «Եղբայրությունն» ունեցել է մարտական կառույց, որի սկզբնական օղակում եղել են տասը երիտասարդներ՝ տասնապետի հրամանի ներքո, հաջորդաբար չորս այդպիսի օղակներ են-թարկվել են «քառասունին մեծի» հրամանին: Եվ բոլորը պետք է ենթարկվեին կանոնադրության հրահանգներին. խուսափողները հեռացվում էին եղբայրությունից:

«Սահման եւ կանոնք»-ը բաղկացած է նախաբանից եւ երեք գլխից: Առաջին գլխի կանոնները վերաբերում են «Եղբայրների», «տղայահասակ մանկանց» բարոյական դաստիարակությանը: Նրանք պետք է բարի եւ աստվածահավատ լինեին, հարգեին Իրենց ծնողներին:

Կարելու է իմանալ այն, որ եղբայրության բոլոր անդամներն ամուրի են եղել: Լ. Խաչիկյանը ենթադրում է, որ «Եղբայրության» դռները փակ չեն եղել նաեւ կանանց առաջ» (Լ. Խաչիկյան, 1280թ. Երզնկայում..., էջ 76):

Շարունակությունը՝ էջ 8

«ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ԸՆԹՐԻՔԻ» մեկնությունները ժամանակակից հայ կերպարվեստում

Սկիզբը՝ թիվ 7

Հիրավի, համաշխարհային կերպարվեստի պատմության մեջ առանձնակի է եղել «Խորհրդավոր ընթրիքի» թեման: Ավետարանական ոչ մի սյուժե, ոչ մի առակ ու պատում չեն ունեցել այն հոգեւոր ու բարոյական, այն փիլիսոփայական ու մետաֆիզիկական հնչեղությունը, որ կարողանային նկարիչների բազում սերունդների համար (բացառությամբ Խորհրդային Միությունում ապրողների) ստեղծագործական խթան հանդիսանալ, կարողանային տարաբնույթ մեկնաբանությունների ու մեկնությունների տեղիք տալ: Պատճառը, անշուշտ, ոչ միայն Տիրոջ վերջին ընթրիքի ժամանակ կատարված իրադարձությունների խորհրդապատկան այն շղթան է, որը հիմնովին փոխեց մարդ-Աստված հարաբերությունների նախկին պատկերացումները՝ դրանք հասցնելով այնպիսի տիեզերական խորքայնության, երբ մարդկային բանականության համար անհնարին թվացող վերացականությունն Աստվածորդու ինքնագոյությունը միջոցով, Նրա տառապալի մարմնի ու հեղված արյան գնով դարձավ զարմանալի զգացական իրողություն, այլեւ մարդկային բնությանը բնորոշ խոստելի դրսևորումների, երեւութական ու աներեւոյթ, բանական ու վերբանական ընկալումների ու հասկացությունների խորքային ու խորհրդապատկան ընթերցումների բազմաշերտությունը, որը մշտապես գործում է բոլոր ժամանակներում՝ անկախ ֆորմացիաներից ու կացութաձեւերից:

«Խորհրդավոր ընթրիքի» համաշխարհային պատկերասրահը:

Թեման չէն շրջանցել նաեւ ժամանակակից հայ նկարիչները: Այս հոդվածի համար ընտրել ենք միայն երեք նկարիչ, այսինքն՝ երեք գործ, որոնք միմյանցից տարբերվում են ոչ միայն նկարելաոճով, կոմպոզիցիոն լուծումներով, գունային մտածողությամբ, այլեւ մեկնաբանության ինքնատիպությամբ, ասելիքի միանգամայն յուրօրինակությամբ:

Առաջինը, որին ուզում ենք անդրադառնալ, Էդվարդ Սասունի գործն է, ուր նկարիչը փորձել է շեշտել-կարեւորել ավետարանական պատումի ծիսական կողմը, այն է՝ Տիրոջ գաղափարական վերջին ընթրիքի բուն խորհուրդը՝ Ոսկւլայի եւ Յաղորդության հաստատման փաստը՝ հենվելով առավելապես Յովհաննես ավետարանչի հաղորդած տեղեկությունների վրա:

Ուղղանկյուն սեղանի կենտրոնում կանգնած է Տերը՝ ափերի մեջ պահած գավաթը: Նա քիչ գլխիկոր է ու թախծոտ: Աշակերտներից մի մասը՝ վեցը, նստած են սեղանի շուրջը, իսկ հինգը՝ կանգնած են: Նրանք բոլորն էլ ասես շփոթված են ու տարակուսած: Առջեւի պլանի կենտրոնական հատվածում պատկերված են արդեն տեղի ունեցած ոտնվայի պարագանները՝ աթոռը՝ վրան ընկած սրբիչով, ոտնվայի թասը եւ կողքին՝ ջրամանը՝ կուլան: Սրանցից քիչ ձախ՝ դռան ուղղությամբ կանգնած է Յուդան, որը պատրաստվում է կատարելու Ուսուցչի «հանձնարարականը»:


«Հիմա ինչ որ անելու ես, իսկույն արա՛ւ»:

ասես մոռում է միայն ուղղի գլխաշորը: Հետաքրքիր են Վերնատան ինտերիերի լուծումները, որոնք ավելի շատ հայկական ճարտարապետություն են հիշեցնում՝ իրենց կամարներով, սյուներով եւ պատերին ագուցված կավե կնճիթավոր ճրագներով, որոնք խիստ տարածված են եղել Յայաստանում:

Ակնհայտ է, որ նկարչին առավելապես հուզել է Յաղորդության հաստատման տիեզերական պահը: Թերեւս սա է պատճառը, որ նկարչի պատկերած առաքյալների դեմքերը չունեն այն հոգեբանական լարվածությունն ու հարցադրումները, որոնք առկա են առավելապես Յուդայի մատնությունը կարեւորող նկարիչների «Խորհրդավոր ընթրիք»-ներում:

Մեզ հետաքրքրող երկրորդ գործը պատկանում է նկարիչ Փարավոն Միրզոյանի վրձնին, գործ, որի կողքով դժվար է անտարբեր անցնել, եւ սա ոչ միայն այն պատճառով, որ թեման յուրաքանչյուր քրիստոնյայի համար նվիրական է, այլեւ՝ որ այն չափազանց գեղանկարչական է՝ հագեցած լույս ու ստվերի, գույն ու գունաթույրի խոսուն ու նուրբ անցումներով, կոմպոզիցիոն լուծման իմաստային ու համահավաք շեշտադրմամբ: Ուղղանկյուն սեղանի կենտրոնում վեհորեն նստած է Տերը՝ ամբողջովին լուսաթաթախ, ասես վերստին պայծառա-

կերպված: Այդ լույսը ողողել է ողջ սեղանը, սեղանի շուրջը նստած առաքյալների դեմքերը եւ ավելի ցայտուն, ավելի ընդգծված դարձրել այն հոգեբանական լարվածությունը, որ պատել էր աշակերտներին՝ Ուսուցչի հայտնած լուրից: Սեղանի վրա դրված են ընդամենը մի պնակ եւ մի գավաթ, որն ուր որ է Տերը պիտի բարձրացնի: Առջեւի պլանում մեջքով դարձած՝ կքած է Յուդան՝ ամբողջովին սեւերի մեջ: Դրամատիզ-



մով հագեցած այս պատկերի մեջ առանձնակի հնչեղություն ու շեշտադրություն ունեն Տիրոջ եւ Յուդայի կերպարները: Ասես երկուսն էլ քաջ գիտեն իրենց հետագա ճակատագիրը: Եթե Ուսուցչի գալիք տանջանքներն ու մահը եռօրյա պատմություն ունեն են հետո պատկերվելու են հավիտենական կյանքով ու փառքով, ապա Յուդային սպասվում են հավիտենական մահ ու անեծք: Նկարչին հաջողվել է այս միտքը դիտողին հասցնել Յուդայի՝ ոչ միայն մեջքով եւ ամբողջովին սեւերի մեջ պատկերումով, այլեւ նրա ներս ընկած, կուչավորված ուսերի ընդգծումով՝ այսպիսով շեշտելով կերպարի ողջ ողբերգականությունը:


Վերնատան կամարակերպ պատուհանից երևում է երկինքը՝ լույսի ու մթան անհանգիստ ու անհավասար խմորումներով: Ակնհայտ է, որ նկարչին առավելապես հուզել է սյուժեի տիեզերական բարոյ եւ չարի մշտնջենական պայքարը, որի սահմաններն սկզբնավորվել են Ադամի ժամանակներից եւ պիտի ձգվեն այնքան, մինչեւ մարդկությունը չգգա իր՝ Աստծո պատկերի կատարելատիպը լինելու մեծագույն պարգեւը:

Երրորդ գործը գեղանկարիչ Անատոլի Գրիգորյանի «Խորհրդավոր ընթրիքն» է, որի իրական ու այլաբանական իմաստը, կոմպոզիցիոն ինքնատիպ լուծումը, կերպարների անհատականացված, հոգեբանական մեկնաբանությունները, կեցվածքներն ու ժեստերը, հորինվածքում ներառված խորհրդանշական պատկերները դիտողին երկար գաժում են նկարի առջեւ: Այս նկարչի «Խորհրդավոր ընթրիքը» ա-

ռանձնահատուկ է նաեւ նրանով, որ սեղանի կենտրոնում նստած Յիսուսը որեւէ կերպ տարանջատված չէ մնացյալ առաքյալներից, ինչպես ընդունված է, այլ ընդամենը նրանցից մեկն է, Որին միայն Յուդան պիտի իր վարձկան համբույրով առանձնացնի: Ոչ թե գաղափարական սեղանին նստած Տերն է այստեղ կենտրոնական իմաստակիրը, այլ Նրա մոտալուտ խաչելության պատկերը, որը ծանրորեն կախված է նրանց գլխավերելում: Խաչված Տիրոջ դեմքին դրոշմված է անասելի ցավի կնիքը, մարմինն ասես պատռել է ճերմակ վարշամակը, որը հետո պիտի աշակերտները գտնեն թափուր գերեզմանում: Տիրոջ ոտքերի մոտ՝ աշակերտների գլխավերելում, աղավաղված Սուրբ Յոգին է, Որի թեւից այդ պահին արյուն է հոսում: Առաջին պլանում՝ սեղանի մոտ՝ ձախից, մի շուն է նստած՝ զարմանքը դնել ծայրին: Այս հավատարմության ու անշահախնդիր սիրո խորհրդանշող հանդիսացող կենդանին ասես զգում է կատարվելիքը, սակայն չի կարողանում զգացածը տեղ հասցնել: Աջից պատկերված են կարմիր, սեւ եւ սպիտակ ձկնկուլներ: Ինչպես հայտնի է, ձկնկուլը եւս Տիրոջ բազում խորհրդանշաններից մեկն է: Կարմիր ձկնկուլը, որն առաջինն է, խորհրդանշում է մոտալուտ վտանգը, երկրորդը՝ սեւը՝ Տիրոջ խաչի վրա մահ ընդունելն է, իսկ սպիտակը՝ Նրա փառավոր հաղթության ավետիսը: Եվ այս ամենը նկարիչը պատկերել է ոչ թե Վերնատանը, ինչպես ընդունված է, եւ ինչպես հաղորդում են ավետարանիչները, այլ ծաղկուն բնության գրկում՝ ծառ ու ծաղկի մեջ:

Միավորված չենք լինի, եթե ասենք, որ նկարիչ Անատոլի Գրիգորյանն իր «Խորհրդավոր ընթրիքը» կտավում պատկերել է ոչ թե մեզ հայտնի սյուժեի որվագները՝ Ոսկւլան, Յուդայի մատնությունը եւ Յաղորդության հաստատումը, որոնց ակնարկներն անշուշտ առկա են կտավում, այլ Տիրոջ ապագա հարության զարմանահրաշ փաստը, որը եւ հաղթական լուրմին հասցրեց Աստվածորդու առաքելությունը երկրի վրա եւ մարդկության կյանքում: Տոնականորեն գունեղ, օդառատ այս պատկերը դիտելիս համակվում ես այն զգացողությամբ, որ Տերը ոչ թե Իր աշակերտների հետ իրեական գաղափարական սեղանին է նստած եւ այն էլ՝ վերջին անգամ, այլ աշակերտների, Իր կենսարար Մարմինն ու Արյունը ճաշակած հոտի հետ տոնում է Իր փառավոր հարությունը՝ երաշխիքը մարդկության փրկության:

Անտոլի ԳՐԻԳՐՅԱՆ



ՔԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ...

Սկիզբը՝ էջ 4

Հրանտ Մաթևոսյանի լեզուն միաժամանակ ե՛ւ պատմողական է, ե՛ւ քնարական, որ նույնն է, թե՛ ե՛ւ երկաթ է, ե՛ւ աղբյուրի կարկաչ: Նա ստեղծեց գեղարվեստական արձակ ժամանակակից լեզու, որը շատերի կողմից նաեւ նմանակվում է: Նա ստեղծեց գեղարվեստական արձակի ժամանակակից պատում, ժամանակակից ոճ, ժամանակակից կշռույթ, ժամանակակից լեզվամտածողություն: Հիմքը ժո-

ղովորդախոսակցական կենդանի հայերենն է՝ գտված, նստած, խաղաղված. ամուր՝ իր արմատներով, նուրբ՝ իր ներքին երաժշտությամբ, ճոխ՝ իր բառակազմով, ճկուն՝ իր շարադասությամբ, հարուստ՝ իր իմաստներով ու ենթմաստներով, գունեղ՝ նկարչականության աստիճանի: Բառի ձայնը, բառի գույնը, բառի կշռույթը, բառի ամրությունը՝ այս ամենը գրողն զգում էր բնածին օժտվածությամբ եւ վերարտադրում ստեղծողի անվերապա-թյամբ: Էջի, այսինքն՝ գրի տա-

ռապանքը խոսքի ու գրույցի մեջ էր, բայց գրքում այդ տառապանքը չէր զգացվում, դրա փոխարեն կենսավորվում էր ընթերցման հաճույքը:

Ի՛նչ հզոր ուժ է լեզվի դյուրանքը, այն հզոր տարբերը, որ կենդանացնում է պատմությունը, շնչավորում է հերոսներին, իրական է դարձնում միջավայրը, ժամանակը, տարածությունը: Ընթերցման հաճույք, որ միաժամանակ ե՛ւ թանձր վիպական պատմություն է, ե՛ւ անկույթական բանաստեղծություն, որ ե՛ւ

կյանքի դրամա է, ե՛ւ կյանքի ծիծաղ: Եվ այս ամենը միաժամանակ. այնպես, ինչպես քարափին կանգնած տեսնում ես դաշտ ու անտառ, սար ու ձոր, մարդ ու կենդանի, լույս ու ստվեր, մարդկանց կանչերը, գետի կարկաչ, քամու սոսափը, քարի լռությունը, առնում քարի ու քարափի, ծառի ու ծաղկի բուրմունքը, զգում արեւի ջերմացնող կենսատու ուժը, քամու սառն ու տաք հոսանքները, ընկալում գույները՝ խանձված լեռներից ու խանձված խոտերից մինչեւ ապրող կանաչն ու երկնքի լուսավոր կապույտը: Եվ այս ամենը՝ բառի, նախադասության, պարբերության ներքին կշռույթով, մի անի-

մանալի, լուռ, բայց լավոր երաժշտությամբ: Դա իմաստուն լեզու է, խիտ՝ ասույթի նման: Ինչպես նկարչին տարբերում են գույներով, երաժշտին՝ հնչյունների իր ներդաշնակությամբ, այդպես էլ գրողն առանձնանում է իր լեզվով: Կայանում է այն գրողը, ով ստեղծում է իր լեզուն: Եվ այս ամենը՝ որպես մեծ կյանքի հնչեղ համանվագ, որ գրողի կյանքն է՝ բաժանված իր հերոսների վրա: Գրողի մեծ կյանքը մեծ աշխարհի հավիտենական շարժման մեջ...

Շարունակելի

Դավիթ ԳՍՍՊՈՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր,
պրոֆեսոր

ՆՈՎԻՎՆ ՈՒ ՆՐԿ ՆՈՏԸ



Սկիզբը՝ էջ 6

- Չեմ կարծում, որ անհնար է, բայց կարծում եմ, որ բավական դժվար է, որովհետեւ այն, ինչ առաքյալները, սրբերը պատգամեցին մեզ, իրենց կյանքով ապրեցին եւ ապացուցեցին, որ անհնար չէ։ Եթե նրանք կարողացան դա անել, նշանակում է՝ բոլոր մարդիկ էլ կարող են, բայց դա դժվարին ուղի է, որի համար զոհողությունների է պետք գնալ։ Նախ մենք պետք է մեր «ես»-ը կարողանանք հաղթահարել. առանց դրա հնարավոր չէ հասնել այդ երանությանն ու խաղաղությանը։ Զրիստոնեության ճանապարհը, լինելով խաչի ճանապարհ, արդեն իսկ դժվար է։ Հեշտությամբ ոչ ոք մեծ պարգևներ չի, մրցանակների չի հասնում. դրա համար ջանք է պետք։

- **Հայր սուրբ, կյանքի հասցրած նեղությունների ու դժբախ-**

տությունների արդյունքում հաճախ հուսահատական վիճակում են հայտնվում նույնիսկ այն մարդիկ, որոնք, թվում է, ունեն այդ աստվածային խաղաղությունը։ Արդյո՞ք սա նշանակում է, որ այդպիսիների հոգում աստվածային խաղաղությունը թերի էր հաստատված։

- Մարդը պիտի գիտակցի, որ այս կյանքում ամեն բան ժամանակավոր է. երջանկությունն էլ, տխրությունն էլ, հաջողությունն ու ձախողությունն էլ ժամանակավոր են։ Մենք չպետք է մի փոքր ձախողությունից կորցնենք մեր խաղաղությունը։ Ոչինչ մայրուն չէ այս կյանքում, ամեն ինչ ունայն է, ինչպես ասում է ժողովուրդը։ Մենք մեր հավիտենական երջանկությունը գտնում ենք միայն Աստծո մեջ։ Օգոստինոս Երանելին ասում է. «Ո՛ր Տեր, ես ո՛ր կարող եմ գտնել իմ երանությունը, եթե ոչ միայն Զո մեջ»։ Հիշենք հայրերի վարքից մեկ օրինակ։ Մի ծեր վանական է լինում, որ երկար տարիներ ճգնում է վանքում եւ մեծ շնորհների արժանանում Աստծո կողմից։ Նրա աշակերտը մի օր հարցնում է նրան. «Ի՞նչն է պատճառը, որ դու տարիներ շարունակ խոնարհության մեջ ես ընկղմված. ես երբեք չեմ տեսել քեզ վիճելիս կամ բարկացած»։ Վանականը պատասխանում է. «Տղա՛ս, մարդիկ ինչ ասում են, ես չեմ հավանականում. նույնիսկ եթե ճիշտ էլ չէ, ես երբեք չեմ վիճաբանում»։ Ա-

շակերտն ասում է. «Հայր, իսկ գուցե սխալ է ընտրած ճանապարհը»։ «Գուցե, տղա՛ս», - ասում է վանականը՝ դարձյալ չհակառակվելով եւ մնալով իր խոր խաղաղության մեջ։

- **Հայր սուրբ, կարո՞ղ ենք ասել, որ այսօր մեզանում առկա դժբախտությունների, խռովությունների, չարիքի պատճառը մարդկանց՝ Աստծուց հեռանալն է։**

- Միանշանակ, որովհետեւ որքան մոտենում ենք Աստծուն, այնքան միմյանց հետ էլ սիրով եւ ջերմությամբ ենք վարվում։ Ես չեմ կարծում, որ մեկը ճշմարիտ աստվածասեր լինի եւ իր եղբորը չսիրի, ինչպես առաքյալն է ասում. «Ո՛վ չի սիրում իր եղբորը, ո՞րին տեսնում է, ինչպե՞ս կարող է սիրել Աստծուն, որին չի տեսել» (Ա Յովհ. Դ 20)։ Եղբայրասիրությունը դուռը, բանալին է աստվածսիրության։ Սա թող մեզ նշան լինի, որ եթե մեկը չի սիրում իր եղբորը, եթե մեկի մեջ աստելություն կա, ուրեմն Աստված Նրա մեջ չի բնակվում, Նրա բարեպաշտությունը կեղծ է։ Խաղաղությունն է, որ մեզ մոտեմացնում է սիրո կապերով է միացնում, եւ մենք դառնում ենք մեկ հոտ՝ ունենալով մեկ Հովիվ՝ Զրիստոսին։ Խաղաղության հասնելուց առաջ մարդն իր մեջ պետք է սեր ունենա, եթե սեր ունենա, խոնարհություն կունենա։ Զրիստոսենական առաքինությունները միմյանց հետ խիստ շաղկապված են։

ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ...



Սկիզբը՝ էջ 6

Հաջորդ երկու գլուխները վերաբերում են փոխօգնությանը, միմյանց նկատմամբ ունեցած պարտավորություններին։ Սա կայն եղբայրության հիմնական նպատակը, ինչպես վերը նշեցինք, «բռնավորներին» ու «չար մարդկանց» դիմադրելն էր. «Վասն զի աշխարհս այս ծով է եւ մարդիկ ալեկոծին ի սմա պես պատահմամբ գործոց. եւ թե ոք յեղբայրութենս ի փորձութիւն մարդկան անկանիցի եւ ի բռնավորաց նեղիցի, ամենայն եղբայրքն ջան եղեալ հանցեն գնա ի հասեալ վշտացն, զի որ եղբայր եղեւ մեզ» (Լույս տեղում, էջ 77)։

«Եղբայրությունը» կազմակերպվել է Երզնկայի համար շատ բախտորոշ ժամանակաշրջանում։ 1243 թ. մոնղոլները գրավում են Երզնկան։ Չնայած տարիներ հետո այն ժառանգաբար անցնում է հայ իշխանների կառավարության տակ։ Կարելոր խնդիրը սպասվելիք ներխուժումներին ու վտանգներին պատրաստ լինելն էր։ Բնական է, որ առաջին հերթին առեւտրականներն ու արհեստավորները, ունեւորները պետք է ձգտեին պահպանել իրենց ունեցվածքը։ Հավաքվում է քաղաքաբնակ երիտասարդների՝ քաջ ու առաքինի կտրիճների մի զորախումբ, որը պատրաստ էր պաշտպանելու

հարազատ քաղաքը օտարներից։ Նրանք պիտի ուղեկցեին առեւտրական քարավաններին՝ այլ քաղաքներ անվտանգ տեղափոխելու համար։ Հետաքրքրական է, որ այս կազմակերպության համար կանոններ է գրում մտավորական Հովհաննես Երզնկացին, որը եղել է Երզնկայի Հովհաննես իշխանի եւ Սարգիս արքեպիսկոպոսի ազգակիցը։ Կարծում ենք, որ եղբայրության ստեղծմանն օժանդակել են ինչպես Եկեղեցին, այնպես էլ իշխանավորները՝ ապահովելով ընդհանուր անվտանգությունը։

«Եղբայրության» անդամները խաղաղ ժամանակներում զբաղվել են շինարար աշխատանքով։ Նրանք, մաքուր քրիստոնյա լինելուց զատ, իրենց նախնիների հերոսական ոգով դաստիարակված քաջ «մանկ-տիք» էին, երաժիշտ գուսանների հայրենասիրական ու քնարական երգերից հոգեւոր սնունդ ստացած կտրիճներ։ Այստեղ ավելորդ չէ նորից հիշել 13-րդ դարի բանաստեղծ Կոնստանդին Երզնկացու տողերը, ուր այդ «երբայրները» իրենցից «սիրու բաներ» են ուզել(Կոստանդին Երզնկացի, Տաղեր, էջ 165)։

Եղբայրք մի կան հետ մեզ սիրով, կշխարհի բան ուզեն զգրով,

Նա ես վասն այն յայտնի ձայնով՝ Սիրու բաներս ասցի յովով։

Եղբայրները բնավ չէին ամփոփվում եղբայրությունների շր-

ջանակում։ Նրանք մտածող եւ կենսասեր ընթերցողներն էին, որոնք բանաստեղծից պահանջում էին սեր ու սիրտ, վայելքի երգ ու կյանք, ապրող ու վառվող մարդիկ, որոնք մասին, որոնք համար բանաստեղծը գրել է շատ գեղեցիկ տողեր (Լույս տեղում, էջ 177)։

*Զո սիրտ ի յաշխարհիս
ի հասարթէն է հուր վառել.
Զանի որ շատ սիրես՝
նա շատ դռներ է քեզ բացել։
Մարմնստ է ցանգութեամբ
ի յաշխարհիս սերն մաշել,
Զանի որ շատ վայլես՝
Յետեւ կարօտ ես մնացել։*

Կոստանդին Երզնկացու տաղերից մեկը վերնագրված է այսպես. «Բան Կոստանդեայ առ մեր հոգեւոր եղբայրն Ամիր, հոգով ի հոգի եւ սրտէ ի սիրտ»։ Բնագրից պարզվում է, որ այդ «հոգեւոր եղբայրը» աշխարհական է եղել, որին բանաստեղծը համարում է ոչ միայն իր, այլեւ ինչ-որ մի խմբի պարծանքն ու սիրելի եղբայրը։ Ուշագրավ է, որ ամբողջ տաղում հեղինակն իր խրատներն ուղղում է ոչ միայն նրան, այլեւ նրան համախոհ ուրիշ եղբայրների (Լույս տեղում, էջ 195)։

*Պարոն Ամիր, մեր
պարծանաց եղբայր եւ սիրելի,
Չայս սակաւ բանքս ի կարգի,
որ վասըն ձեր շարագրեցի,
Աղէկ մըտիկ դիր ու ճանչէ,
ուժով է բանս եւ պիտանի,
Բայց յանգետ մարդիքն ի մօտ
Է՛ նախիտան, դառն եւ լեղի։*
Պարոն Ամիրի հետ՝ որպես գիտուն բանիմաց մարդու, մեծ վստահությամբ իր մտքերն է կիսում Կոստանդին Երզնկացին։ Բանաստեղծությունը ժամանակի տգետներին խարազանող եւ խելքի ու իմաստության հաղթանակը հավաստող Նրա լավագույն գործերից է։

Շարունակելի

Վարդան ԵՐԿԱԶԱՐՅԱՆ
Գրականագիտական
գիտ. թեկնածու, դոցենտ

ԱԹ-ԹԱՆԱՀԻ

Սկիզբը՝ էջ 5

Ոմանք գոհվում էին, ուրիշները՝ հաշմվում։ Մարդիկ վկայում են, որ լսել են այդ անունը դեռեւս ծերունիներից։ Այդ գյուղն ավերված է, եւ այնտեղ կյանքի նշույլ անգամ չկա։

Ալ-Ջալանդի անունով մեկը, որին խալիֆ ալ-Մամունը նշանակել էր ճանապարհի պահապան, ուզեց շարժել այդ վեմը։ Նա արձանը կապկպեց պարանով, եւ եզները այն քարշ տվին, տարան անապատ։ Դա եղել է Երեկոյան։ Իսկ առավոտյան, երբ նա վերադարձել է այնտեղ, պարզվել է, որ արձանը հեռացել է այնտեղից, ուր նա թողել էր նախօրեին, եւ մոտեցել էր նախկին տեղին։ Ալ-Ջալանդին թողել է արձանն այդտեղ ու գնացել։

Հետո մի այլ մարդ՝ Ռուսաֆից, քաշել է արձանը՝ դրա համար բանվորներ վարձալով, որոնք քաշում էին քարը, եւ նա քարը տարել է Ռուսաֆ։ Բայց բնակիչներն այն վայրերի, ուր միշտ կանգնած է, գալիս սկսում են գոռալ ու աղմկել. «Մենք սովոր էինք դրան։ Գիշերներով դրա մոտ օթեւանում էինք, եւ այդտեղ հաճելի էր մեզ։ Վայրի գազանները մեզ չէին անհանգստացնում, որովհետեւ չէին համարձակվում մոտենալ նրանց, ում օթեւան էր տալիս արձանը»։ Եվ մեծ դժվարությամբ այն տարան նախկին տեղը։ Իսկ արձանի կրծքին, թիկունքին եւ ուսերին անձանոթ հին մակագրություն կար։

Նույն վայրում կա գյուղ, որ կոչվում է Կասաբաթ Նախր ալ Փադլ, եւ դրա իսկական անունը Թալլ-Խավար է։ Դրանից մոտ երկու փարսախ հեռու բլուր կա՝ Թալլ Ռիհա անունով։ Դա հին քաղաք է, որտեղ հնության շատ մնացուկներ կան, եւ դրանց մեջ՝ վիթխարի խորանարդ քար՝ ինը արմունկ երկարությամբ՝ գահի նման։ Դրա մեծ մասը խրված է հողի մեջ։ Վրան կան պատկերներ ու արձանագրություններ։ Թալլ-Խավարի տերը՝ Ահմադ իբն Խալիֆ, ուզեցել է պեղել եւ տեսնել՝ ինչ կա քարի տակ։ Սկսել են փորել, բայց բան չի ստացվել, որովհետեւ որքան փորում էին քարի շուրջը, այնքան քարը խրվում էր հողի մեջ։ Տեսնելով, որ իր բուրդը ջանքերը ապարդյուն են, Ահմադ իբն Խալիֆն թողնում է այդ գործը։

Բասրայի ու Վասիտի միջեւ գտնվող մի վայրում՝ գետից ոչ հեռու, մի գմբեթավոր հին կառույց կար։ Ըստ ավանդության՝ այդտեղ էր Կարունի գանձատներից մեկը, որ կոչվում էր ալ-Կարա։ Երկարությունը 40 արմունկ էր, նույնքան էր լայնքը, իսկ բարձրությունը՝ ավելի շատ։ Դա կառուցված էր խեժով, խճով ու պտղի կորիզներով։ Այն դուռ չուներ, եւ մենք չէինք կարող գտնել մուտքը։ Թալլ-Խավարի բնակիչներից մեկը՝ Ումար Զյունը, մի անգամ հյուրընկալեց այնտեղով անցնող մի ուղեւորի։ Ցանկանալով երախտագիտություն արտահայտել՝ այդ ուղեւորը ցույց տվեց, թե ինչպես կարելի է մտնել ալ-Կարայի մեջ, եւ թղթի վրա գրեց ու տվեց Ումարին։ Վերջինս ասաց. «Լավ կլինի դիմենք որեւէ զորավոր մարդու», - մատնանշեց Խալանին ու Աբու-լ-Ջասիմ իբն Խուրեյ-Աբդիսին, - իսկ նրանք այդ ժամանակ այնտեղ ամենագլխավորներն էին։

Ումարը նրանց հայտնեց այդ մասին, եւ նրանք իրեն տվին բո-

լոր անհրաժեշտ պիտույքները. բահ, զանազան երկաթյա ու փայտե գործիքներ, զամբյուղներ, սանդուղքներ, նավակներ, պարաններ եւ այլն։ Այդ ամենի, նաեւ ուտեստի ծախսը բազում հազար դրրիեմ էր։ Ի հավելումս՝ տվել էին մեծաթիվ պահախումբ, որովհետեւ այդ վայրերում վիստում էին կարմատներ ու բեդուիններ։ Ապա նրանք Ումարին ու նրա հետ Եղած բլուրին նավակներ նստեցրին, որովհետեւ երբ ջուրը բարձրանում է, հովտում ամբողջապես ծածկում է փարսախից փոքր-ինչ պակաս տարածք, եւ քաղաքը մեկուսանում է ալ-Կարայից։

Հյուսն Ումարի որդին մեզ պատմում էր, որ ինքն այնտեղ եղել է հոր հետ, եւ որ Ումարը 40 արմունկ է հաշվել այդ շինությունից դեպի արեւելք։ Հետո նա սկսել է այդտեղ փորել եւ դեմ է առել հսկայական քարի, որը կարող էին բարձրացնել շատ մարդիկ համատեղ։

Ումարն աշխատեց արտահանել քարը, ի վերջո հաջողվեց շարժել այն։ Պարզվեց, որ դրա տակ ստորգետնյա մուտք կար, հենց դա՝ էր թաքցնում քարը։ Մուլք ի-ջավ, եւ Ումարը որոշեց ստորգետնյա մուտքով առավոտյան թափանցել ալ-Կարա։

Գիշերն անցավ, իսկ առավոտ վաղ՝ հենց արշալույսին, Ումարը եւ իր հետինները աղմուկ ու գոչյուն լսեցին. «Մեծ է ալլահը»։ Եվ նախարշալույսյան մշուշում նկատեցին սոււերակիր հեծյալների ու խիստ վախեցան, շտապեցին այնտեղ, ուր կանգնած էին իրենց նավակները։ Նրանք վազում էին։ Տակավին կատարյալ չէր լուսացել, եւ դեռ տեսանելի չէր այն ամենը, ինչ կատարվում էր անապատում։ Մարդ չկար այնտեղ։ Նրանք որոշեցին, որ հեծյալներն այլ կողմ արշավեցին, իսկ իրենք դարձան ետ՝ իրենց գիշերավայրը։ Ճանապարհին գտան Ումար Զյունին՝ կտրած պարանոցով։ Բայց նրանց ունեցվածքին ձեռք չէին տվել։ Հավաքեցին ամբողջը, որ ունեին, վերցրին Հյուսնի դին ու մեկնեցին։

Ասում են, որ հետո նրանց չհաջողվեց գտնել ո՛չ այն քարը, ո՛չ այն տեղը, որտեղ փորել էին։ Այդ վայրերով անցնող մարդիկ եւ նրանք, որ հաճախում էին այդտեղ, երբեմն այդ ավերակների մոտ դրրիեմներ ու թանկարժեք քարեր են գտնում։ Հաճախ այնտեղ սկսում են թեւածել ջալլամները ու ձկադրել, որովհետեւ այնտեղ անմարդ է, եւ շատ հազվադուրս է մարդ գալիս։

Շարունակելի

Ռուսերենից թարգմանեց
Արշակ ՄԱՂՈՅԱՆԸ

ԵՐԻՍՏՈՆՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝
«Զրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբուլյան

Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 517 197

Էլ. փոստ՝ qh@etchmiadzin.am
web կայք՝
kh-tert.livejournal.com
krishayan.wordpress.com

Ստոր. տպագր. 2.7.2013 թ.

Տպագրանկը՝ 2100
Գինը՝ 50 դրամ